

ՍՈՒՐԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԱՉԱՏԱԳՐԵՑ ԽԱՆ ՇԵՅՆՈՒՆԸ

ՌԱՎՇԻՆԿԹԸՆ. «ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԻ ՎԱՐՉԱԿԱՐԳՆ ՌԻ ԱՆՈՐ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՀԻՄԱ ԻՍԿ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ ԻՏԼԻՊԻ ՄԷՋ ԶԻՆԱԴԱՂԱՐԻ ԴՐՈՒԹԵԱՆ»

Մարդկային իրաւանց սուրիական դիտարանը հաստատեց, որ սուրիական բանակը ազատագրած է Իտլի-պի հարաւային գիւղական շրջանին մէջ գտնուող Խան Շէյխուն քաղաքը, ուրկէ բռնն բախումներէ ետք հեռացած են ահաբեկչական զինեալ խմբաւորումները։

Դիտարանը նաեւ յայտնեց, որ սուրիական բանակը ազատագրած է նաեւ Չամա-յի հիւսիսային գիւղական շրջանի շարք մը գիւղեր, ուր-կէ եւս հեռացած են զինեալ-ները։



Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանքեր Մոր-կըն Օրթակուս ընկերային ցանցի ճամբով շեշտեց. «Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի վարչակարգն ու անոր դաշնակից-ները պէտք է հիմա իսկ վերադառնան Իտ-լիպի մէջ զինադադարի դրութեան»։

«Քաղաքայիններու եւ մարդասիրական ու ենթակառոյցներու նորոգութեան ոլոր-տին մէջ աշխատողներու դէմ շարունա-կուող վայրագ յարձակումներուն ընթաց-քին թրջական կարասանի մը դէմ անպա-տասխանատու օդային հարուած մը տեղի ունեցաւ։ Կը դատապարտենք այս բռնա-րարքները, որոնք պէտք է դադրին», նշեց աւ։

Յիշեցնենք, որ սուրիական օդուժը ռմբակոծած էր դէպի Խան Շէյխուն շար-ծող թրջական բանակի շարասիւնի մը մերձակայքը։ Թուրքիոյ պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարած էր. «Սուրիոյ հիւսիս-արեւմուտքը գտնուող հսկողութեան 9-րդ կէտ ուղղուող թրջա-կան զինուորական շարասիւնին դէմ սու-րիական օդային հարուածին պատճառով 3 քաղաքայիններ սպաննուեցան եւ 12 ու-րիշներ վիրաւորուեցան»։

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուք Չաւուշօղլու երկէ յայտարարեց, թէ Անգարան պիտի չվերցնէ հսկողութեան այն կէտը, ուր ուղղուած ատեն թրջական

բանակի շարասիւնը օդային հարուածի ենթարկուած էր։

Ան աւելցուց, որ Միացեալ Նահանգնե-րուն հետ Սուրիոյ մէջ անվտանգութեան գօտիի շուրջ բանակցութիւնները պիտի շարունակուին՝ աւելցնելով, որ Անգարա այլընտրանքային ծրագիր մը ունի, եթէ համաձայնութիւն չգոյատաւ։

Ան յայտարարեց, թէ Անգարան ան-վտանգութեան գօտիի հարցով ամերիկ-եան որեւէ ձգձգումի պիտի չտոկայ՝ աւելց-նելով, որ ամերիկացիները նախ եւ առաջ պէտք է անկեղծ ըլլան։

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով յայտարարեց, որ Մոսկուա խիստ կերպով պիտի հակադարձէ Սուրիոյ մէջ ռուս զինուորներու դէմ որեւէ յարձա-կումի՝ աւելցնելով, որ Սուրիոյ մէջ ռուսա-կան եւ թրջական բանակներուն միջեւ հա-ղորդակցութիւնը կը շարունակուի։

Ռուսական դիւանագիտութեան պետը նաեւ նշեց, որ ռուս զինուորներ կը գտնուին Իտլիպի Նահանգին մէջ։

Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ երէկ «Միացեալ Ռուսիա» կուսակցութեան պատուիրակութեան հետ իր հանդիպու-մին ընթացքին յայտարարեց. «Իտլիպի մէջ վերջին բախումները կասկած ունեցող-ներուն բացայայտեցին Անգարայի յստակ եւ անսահման աջակցութիւնը ահաբեկիչ-ներուն»։

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՑ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՕԴԱԿԱՅԱՆԻ ԸՆԴԱՐՉԱԿՈՒԱԾ ԲԱԺԻՆԻՆ

Վարչապետ Սաստ Զարի-րի երէկ կէսօրին Ուաշինկթը-նէն վերադարձաւ Պէյրութ։

Նախքան օդակայանէն դուրս գալը, Զարիրի Պէյրու-թի միջազգային օդակայանի ընդարձակուած բաժինին բացման



արարողութիւնը կատա-րեց՝ ներկայութեամբ զբո-սաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեանի, հան-րօգուտ շինութեանց եւ փո-խադրութեան հարցերու նա-խարար Եուսեֆ Ֆընիմանսի, ներքին գործոց նախարար Ռայա Զասանի եւ տեղեկատուութեան նա-խարար Ժամալ Ժարրահի։

Այս առիթով վարչապետ Զարիրի յոյս յայտնեց, որ ճամբորդներուն համար յաւել-եալ դիւրութիւններ կը ստեղծուին՝ կառա-վարութեան որդեգրած այս նոր քայլերուն շնորհիւ։

Ան հաստատեց, որ կառավարութիւնը տարբեր նախարարութիւններու միջեւ գործակցութեամբ յաւելեալ աշխատանք-ներու ալ պիտի դիմէ, որպէսզի ճամբոր-դութեան աւելի մատչելի պայմաններ ստեղծէ Լիբանան այցելողներուն համար։ «Թեւ ուշացանք օդակայանին մէջ նման դիւրութիւններ ստեղծելու առումով, սա-կայն նախարարներուն աշխատանքը ող-ջունելի է, եւ կը մաղենք, որ բոլոր ճամ-բորդները հանգիստ կատարեն իրենց ճամբորդութիւնը՝ առանց խնդումներու դէմ յանդիման գտնուելու», ըսաւ ան։

Պատասխանելով շրջապալայի զօրա-կից քաղաքական ուժերու դէմ պարտադը-ւելիք ամերիկեան պատժամիջոցներու հա-

ՍՈՒՐԻՈՅ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՇՈՐՋ ՇՈՐԵՐԻ-ՓՈՍՓՕՍ ԶԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ԶԱՌՈՐԱԿԱՑՈՒԹԻՆ

Եգիպտոսի արտաքին գործոց նախարարութեան բանքեր Ամմէտ Զաֆեզ յայտարարեց, թէ Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Սամեհ Շուքրի եւ անոր ամերիկացի պաշտօնակից Մայք Փոմփօ հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին քննարկած են Սուրիոյ կացու-թիւնը։

«Երկու նախարարները վերահաստատեցին ահաբեկչութեան դէմ եւ անոր բնաջնջման հա-մար պայքարին մէջ երկու երկիրներու միջեւ սերտ համակարգումը», նշեց ան։

Զաֆեզ յայտնեց, որ Եգիպտոսի արտաքին գործոց նախարարը իր գրուցակիցին ներկայա-ցուցած է կայունութեան ու անվտանգութեան հաստատման, ինչպէս նաեւ շրջանին մէջ բաղ-ձալի կայունութիւն հաստատող փոխզիջումնային խաղաղ լուծումներու հասնելու եգիպտա-կան ջանքերը։

ՓՈՍՓՕՍ ՑԱՒ ԿԸ ՅԱՅՏՆԷ ԺՊՐԱԼԹԱՐԻ ԿՈՂՄԷ ԻՐԱՆԵԱՆ ԶԱՐԻԴԱՏԱՐ ՆԱՌՈՒ ՆԱԽԱԿԱՆ ԱՐՏՕՆՄԱՆ ԶԱՄԱՐ



Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփօ ցաւ յայտնեց ժպրալթարի իշխանութիւն-ներուն կողմէ 7 շաբաթներ գրաւուած իրանեան քարիւղա-տար նաւուն նաւարկման արտօնման համար եւ բրիտա-նական այդ շրջանի կառավարութեան որոշումը նկատեց «շատ ցաւալի»։

Փոմփօ «Փոքս Նիւզ» պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի ընթացքին նշեց. «Թեհրանի այդ քա-րիւղատար նաւուն փոխադրած քարիւղը ծախելը անոր պիտի արտօնէ նպաստել ֆինանսաւորելու իրանեան զինեալ ուժերը, որոնք աշխարհի տարածքին սարսափ ու քանդում տարածեցին եւ ամերիկացիներ սպաննեցին»։

Յիշեցնենք, որ Միացեալ Նահանգներ ժպրալթարէն խնդրած էին իրանեան քարիւղատար նաւուն գրաւումը երկարածգել, սակայն վերջինս մերժած էր այդ խնդրան-քը՝ նշելով, որ Թեհրանի դէմ հաստատուած ամերիկեան պատժամիջոցները ի գօրու չեն Եւրոպական Միութեան մէջ։

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու արտաքին գոր-ծոց նախարարութենէն պաշտօնատար մը «Ռոյթըրզ» լրատու գործակալութեան յայտնեց, որ Միացեալ Նա-հանգներ դէպի Յունաստան նաւարկած իրանեան քարիւ-ղատար նաւուն վերաբերեալ իրենց «ուժեղ կեցուածքը» յայտնած են յունական կառավարութեան։

«Իրանեան քարիւղատար նաւուն օգնելու որեւէ ջանք կրնայ նկատուիլ Միացեալ Նահանգներու կողմէ ահաբեկ-չական կազմակերպութիւններու ցուցակին մէջ ներառ-ւած կազմակերպութեան մը աջակցութիւն», շեշտեց ան։

Նշենք, որ Իրանեան «Ատրիան Տարիա 1» քարիւղա-տար նաւը ժպրալթարէն ճամբայ ելած էր դէպի յունա-կան Զալամաթա կղզի։

Իրանի Յեղափոխական պահակազուկի հրամանա-տարներէն Իսմայիլ Զաուարի յայտնեց, որ իր երկիրը խիստ կերպով պիտի հակադարձէ իրանեան քարիւղա-տար նաւուն դէմ ամերիկեան որեւէ քայլի։ Ան նշեց, որ Ուաշինկթըն «կը գիտակցի, թէ քարիւղատար նաւուն նա-ւարկումը խանգարելը իրեն պիտի վնասէ»։

«Ատրիան Տարիա 1»-ը պիտի շարունակէ Միջերկրա-կանի մէջ իր նաւարկումը եւ գործադրէ իրեն վստահուած առաքելութիւնը», ըսաւ ան։

«Եթէ քարիւղատար նաւը անգամ մը եւս գրաւուի, Իրանի հակադարձութիւնը նախկինէն շատ աւելի խիստ պիտի ըլլայ», զգուշացուց Զաուարի։

ՓԱՐԱԿՈՒԷՅ ԶԸՉՊԱԼԼԱՆ, ԶԱՄԱՍԸ, ԸԱՅԻՏԱՆ ԵՒ ՏԱՅԵՇ-Ը ՆԵՐԱՌԵՑ ԱՅԱԲԵԿԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՑՈՒՅԱԿԻՆ ՎՐԱՅ



Փարակուէ շըզպալլան, Զամաս շարժումը, Զայիտան եւ ՏԱՅԵՇ-ը ներառեց ահաբեկչական խմբաւորումներու ցուցակին վրայ։

Փարակուէյի արտաքին գործոց նախարար Խուան Էռ-նեսթօ Վիլլամայոր յայտնեց, որ այդ կազմակերպութիւն-ները ահաբեկչական նկատելու որոշումը տրուած է երկրի նախագահ Մարիօ Ապտօ Պենիթեզի հրամանով։

Փարակուէյի նախագահական պալատին հրապարա-կած հաղորդագրութիւնը նշեց, որ երկիրը վճռական կեր-պով կը գործակցի ահաբեկչութեան դէմ միջազգային պայքարին՝ վաւերացնելով շարք մը միջազգային դաշնա-գիրներ եւ համաձայնագիրներ, ինչպէս նաեւ միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ աջակցելով ՄԱԿ-ի եւ Ամերիկեան երկիրներու կազմակերպութեան ուժեղ դե-րակատարութեան։

Փարակուէյի մէջ Ամերիկայի դեսպանը շնորհաւորեց Փարակուէյը իր առած քայլին համար եւ յայտնեց. «Կը կարծենք, որ ասիկա շրջանին մէջ ահաբեկչութեան դէմ պայքարին համար կարեւոր քայլ մըն է, որ պիտի նուա-զեցնէ այդ կազմակերպութիւններուն կարողութիւնը,

ԱՐՑԱԽԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԵՒ ՉԻՆՈՒՐԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ԱՆՃԷՅ ԶԱՍՓՐՉԻԶԻՆ ԴԵՏ



Արցախի Զանրապետութեան նախագահ Բակօ Սա-հակեան, արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեան եւ պաշտպանութեան նախարար, պաշտպանութեան բա-նակի հրամանատար գոր. Կարեն Աբրահամեան 20 օգոս-տոսին հանդիպումներ ունեցան ԵԱՀԿ-ի գործող նախա-գահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Զասփրչիքի հետ։

ՌՈՒՄԻՈՅ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ ԸՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՏԱԳՆԱՊԸ

Ռուսիոյ նախագահի մամլոյ բանքեր Տմիթրի Փեցըով 20 օգոստոսին լրատուամիջոցներուն ներկայացուցած է Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի եւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի հանդիպումին արդիւնք-ները։ «Արմէնփրես»-ի փոխանցումով, վկայակոչելով «Ռո-սիյսքայա Կազեթա» թերթը, Փեցըով նշած է, որ Ռուսիոյ եւ Ֆրանսայի նախագահները Պրեկանտինի մէջ հանդի-պումի ընթացքին քննարկած են շրջանային տագնապնե-րը, որոնց կարգին՝ դարաբաղեան տագնապը։

ԸՍՏ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՂՄԷ ԱՐՑԱԽԻՆ ՏՐՈՒՈՂ ՆՊԱՍՏԻՆ ՂԱՂԵՑՈՒՄԸ ՍԽԱԼ ԱՉԴԱՆՇԱՆ Է ԱԼԻԵԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻՆ




Արցախի ականազերծման համար տրամադրուող ամերիկեան աջակցութեան դադրեցման եւ Սուրիա մար-դասիրական առաքելութիւն ուղարկելու Զայաստանի որոշումին միջեւ կապին մասին հարցումի մը պատաս-խանելով՝ Ամերիկայի Զայ դատի յանձնախումբի հաղոր-դակցութեանց պատասխանատու Էլիզապեթ Յուլճեան

ԿԱՐՕ ՓԱՅԼԱՆ ԵՒ ԷՊՐՈՒ ԿԻՐԱՅ ԶՅԴ ԶԱՐԱՄԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՏ ՏԵՍՆՈՒԹԵԱՆ



Ուրբաթ, 16 օգոստոսին, Թուրքիոյ Ազգային Ժողովին մէջ Ժողովուրդի ժողովրդավարական կուսակցութեան երեսփոխաններ Կարօ Փայլան եւ Էպրու Կիւնէյ, որոնք շրջապտոյտի ելած են Զարաւային Ամերիկա, այցելեցին Պուեմոս Այրեսի մէջ ԶՅԴ Զարաւային Ամերիկայի Կեդրո-նական կոմիտէի կեդրոնատեղի։ Չիրենք ընդունեցին ԶՅԴ

ՆԱԽԱԳԱՀ ՍՈՒՆ. «ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆ
ԳՏՆՈՒԵԼՈՒՄ ՆՊԱՏԱԿՆ Ե
ՄՏԱԶՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԱՐԱՏԵԼ ԵՒ
ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՍՐԱՊՆԴԵԼ»



Հանրապետության նախագահ զոր. Միշել Աուն երեկ Պեյթետտիկ մեջ ընդունեց Լիբանանեան ժողովրդավարական կուսակցության ղեկավար, երեսփոխան Թալալ Արսլանը՝ ընկերակցությամբ գաղթականներու հարցերու նախարար Ղասսան Աթալլայի, տեղահանուածներու հարցերու պետական նախարար Սալեհ Ղարիպի, ինչպէս նաեւ Հօզոր Լիբանան համախմբումի երեսփոխաններ Մարիո Աունի եւ Սեզար Ապի Խալիլի:

Հանդիպումին ընթացքին նախագահ Աուն յայտնեց, որ Լեռնալիբանան գտնուելուն նպատակն է մտահոգութիւնները փարատել եւ ազգային միասնակամութիւնը ամրապնդել:

Նախագահ Աուն յայտնեց, որ 13 սեպտեմբերին ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովը պիտի քուէարկէ Լիբանանը մերձեցման եւ երկխօսութեան մարդու ակադեմիայի վերածելու առաջարկին՝ աւելցնելով, որ Լիբանան երկու տարիէ ի վեր ամէն ջանք ի գործ կը դնէ այդ առաջարկը վաւերացնելու նպատակով:

Ան նշեց, որ այդ ծրագիրը պիտի ըլլայ խաղաղութեան եւ քաղաքակրթութիւններու ու կրօններու ուսուցման համաշխարհային ծրագիր մը՝ հաստատելով, որ լիբանանցիները պիտի ըլլան առաջինները, որոնք պիտի անսան այս ակադեմիային հետապնդած նպատակներուն:

Իր կարգին, Արսլան յայտնեց, որ հանրապետութեան նախագահը երկրին միասնակամութեան, սահմանադրութեան եւ հաստատութիւններուն խորհրդանշին է:

Ան մաղթեց, որ ամէն բան ճիշդ հունի մէջ կը գտնուի՝ աւելցնելով, որ Պաապտայի մէջ նախագահ Աունի հովանաւորած սրտբացութեան եւ հաշտութեան հանդիպումը սկզբնաբայլ մըն է դէպի ամբողջական լուծում:

Արսլան հաստատեց, որ լիբանանեան պետութեան պարտականութիւնն է Լեռնալիբանանի մէջ մշակել ապահովական ծրագիր մը՝ կանխարգիլելու համար միջադէպերը եւ պաշտպանելու համար կայունութիւնն ու քաղաքացիական անվտանգութիւնը:

Միւս կողմէ, նախագահ Աունի այցելեց նաեւ նախկին երեսփոխան Էմիլ Դահմէ, որ հանրապետութեան նախագահին հետ ըննարկեց լիբանանեան իրադարձութիւնները, ինչպէս նաեւ շրջանային զարգացումները:

Նախագահ Աունի այցելեցին նաեւ ֆրանսացի լրագրողներու պատուիրակութիւն մը, ինչպէս նաեւ Միջերկրացի մէջ Լիբանանի դեսպան Սամի Նմէյրը. ըննարկուեցան լիբանանեան-միջերկրական երկկողմանի յարաբերութիւններն ու զանոնք գրեթէ բոլոր մարզերուն մէջ ամրապնդելու հեռանկարները:

Նշեց, որ նախագահ Աուն վաղը՝ հինգշաբթի, 22 օգոստոս 2019-ին, կեսօրէ առաջ ժամը 11:30-ին, Պեյթետտիկի մէջ պիտի նախագահէ կառավարութեան ընթացիկ նիստին, որուն ընթացքին պիտի ըննարկուի 46 կետերէ բաղկացած օրակարգ մը:

ՀԶՈՐ ԼԻԲԱՆԱՆ ՀԱՄԱԽՄԱՐՈՒՄ

«ԿԸ ՓԱՓԱՔԻՆՔ ԿԵՐՏԵԼ ՔԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԸ, ՄԱԿԱՅԻՆ ՄԻՆՉ ԱՅԳ ՊԻՏԻ ԶԶԻՋԻՆՔ
ՀԱՒԱՍԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԷՆ»

ՇԵՇՏԵՑ ՊԱՍԻԼ

Հօզոր Լիբանան համախմբումը, նախագահութեամբ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժապրան Պասիլի եւ ներկայութեամբ Լիբանանեան ժողովրդավարական կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Թալալ Արսլանի, երեկ գումարեց իր ընթացիկ նիստը՝ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան Միքոն Շալուիիի կեդրոնին մէջ:

Նիստին ընթացքին ըննարկուեցան լիբանանեան իրադարձութիւնները:

Նիստէն ետք Արսլան յայտնեց, որ ինք ներկաները տեղեակ պահած է Պաապտայի հանդիպումին մանրամասնութիւններուն մասին:

Ան ընդգծեց, որ իրենք հաստատ կը մնան այն կեցուածքին վրայ, որ այդ հանդիպումը սկզբնաբայլ է՝ երկրին քաղաքական ուղեգիծին պահպանումին առումով, եւ անխաճեշտ է, որ այդ քայլը շարունակի Լեռնալիբանանի մէջ քաղաքական իսկական գործակցութիւն յառաջացնելու համար:

Արսլան նշեց, որ Պաապտայի հանդիպումին ընթացքին իրենք շեշտած են Լեռնալիբանանի մէջ ապահովական ծրագիր մը մշակելու կարեւորութիւնը՝ պաշտպանելու համար շրջանաւան կայունութիւնն ու անվտանգութիւնը:

«Լեռնալիբանանի իւրայատկութիւնը անոր ազգային միասնակամութեան եւ գործակցութեան մէջ կը կայանայ, եւ մենք յանձնառու ենք բոլորին հետ գործակցելու: Իսկ Լեռնալիբանանը ազգային միասնակամութեան դպրոց է», ըսաւ ան:



Արսլան յոյս յայտնեց, որ Լեռնալիբանանի ապահովական ապակայունութեան էջը փակուած է՝ մաղթելով, որ լիբանանեան պետութիւնը գործադրէ այն, ինչ որ համաձայնուած է Պաապտայի հանդիպումին ընթացքին:

Իր կարգին, Պասիլ ընդգծեց, որ «Զապոր Շմունի ողբերգական միջադէպէն ետք մեծ ճիգերով գոյացած արդիւնքը ողջունելի է եւ գոհունակ կը պահէ մեզի»: «Պետութեան տրամաբանութիւնը յաղթած է եւ անիկա մեզի առիթ կու տայ քաղաքական մրցակցութեան, որովհետեւ Լիբանանի մէջ կարելի չէ ապրիլ առանց ազատութիւններու», ըսաւ ան:

Պասիլ նշեց, որ Զապոր Շմունի միջադէպին առումով դատական հողովոյթը պիտի շարունակուի՝ աւելցնելով, թէ իրենք կը փափաքեն, որ օրէնքի տրամաբանութիւնը տիրէ բոլորին մօտ: «Մենք բոլորս զիջումներ կատարեցինք, որպէսզի այս հարցը լուծենք, հետեւաբար ներկայիս մեր կեդրոնացումը պէտք է ըլլայ երկրին տնտեսութեան փրկութիւնը: Պաապտայի ելեմտական-տնտեսական ժողովը դրական էր, եւ

Շառ.ը՝ էջ 10

ՄՈՒՍԹԱԶՊԱԼ ՊԼՈՔԸ ՇԵՇՏԵՑ, ՈՐ ՎԱՐՉԱՊԵՏ
ՀԱՐԻՐԻԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ
ԿԱՄ ԱՐՏԱՔԻՆ ՕՐԱԿԱՐԳԵՐՈՒ ԵՆԹԱԿԱՅ ԶԵՆ

Մուսթաբալ պլոքի նախագահ, երեսփոխան Պահիա Հարիրի նախագահեց պլոքի ընթացիկ նիստին, որուն ընթացքին շեշտուեցաւ Պաապտայի մէջ տեղի ունեցած սրտբացութեան եւ հաշտութեան հանդիպումին կարեւորութիւնը, որուն շնորհիւ կարելի եղաւ նաեւ վերսկսել կառավարութեան նիստերուն՝ լուծելու համար երկրին տնտեսական եւ ելեմտական մարտահրաւերները:

Մուսթաբալ պլոքը ընդգծեց նաեւ Պաապտայի մէջ գումարուած ելեմտական-տնտեսական հանդիպումին կարեւորութիւնը՝ հաստատելով, որ պէտք է գործադրել անոր որոշումները, ինչպէս նաեւ կառավարութեան աշխատանքային ծրագիրը:

Անդրադառնալով վարչապետ Սաատ Հարիրիի Ուաշինկթըն կատարած այցելութեան մասին կատարուած մեկնաբանութիւններուն՝ Մուսթաբալ պլոքը շեշտեց, որ վարչապետ Հարիրիի պարտականու-



թիւնները ներքին կամ արտաքին օրակարգերու ենթակայ չեն:

Մուսթաբալ պլոքը հաստատեց, որ երկրին պաշտպանութեան ռազմավարութեան մշակումը պէտք է միշտ Ազգային երկխօսութեան նիւթ ըլլայ եւ ըննարկուի, յատկապէս նկատել ունենալով այն ծրագիրները, որոնք երկխօսութեան նախկին նիստերուն ընթացքին ներկայացուած էին հանրապետութեան նախկին իրաւապահ զոր. Միշել Աունի կողմէ՝ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան անունով, ինչպէս նաեւ հանրապետութեան նախկին նախագահ զոր. Միշել Սլէյմանի կողմէ:

ՖԱՏԻ ԺՐԱՅՍԱԹԻ. «3 ՅՈՒՆԻՍԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՆԷ ԿԵՆՍՈՒՈՐՏԻ
ՅԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ ՄԸ, ՈՐ ՏԱԿԱԻՆ
ԶԵ ՎԱԵՐԱՑՈՒԱԾ»



Կենսոլորտի նախարար Ֆատի Ժրայսաթի երեկ ներկայ գտնուեցաւ կենսոլորտի հարցերով խորհրդարանական մնայուն յանձնախումբի նիստին, որմէ ետք տրուած մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ իրենք կենսոլորտի վերաբերող յատուկ ծրագիր մը ներկայացուցած են 3 յունիսին, որ տակաւին չէ վաւերացուած՝ աւելցնելով, որ բոլոր լիբանանցիները կը տառապին կենսոլորտի ապականումէ:

Ժրայսաթի յայտնեց, որ աղբահանումի հարցով հիմնական լուծումը այն է, որ աղբի տեսակաւորումը բնականին մէջ կատարուի, ինչպէս նաեւ ապակեղրոնացեալ դրութեամբ ընթանայ աղբահանումի աշխատանքը:

Ժրայսաթի շեշտեց, որ աղբահանումի հարցը կուտակուած է եւ հսկայ տաղանայի վերածուած 40 տարուան

Շառ.ը՝ էջ 10

«ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
15 ՕՐ ԵՏԶ ՊԻՏԻ ՓԱԿԵ ԱՊՕՐԻՆԻ
ԿԵՐՊՈՎ ԳՈՐԾՈՂ ՄՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԸ»

ՇԵՇՏԵՑ ՈՒՄԷԼ ԱՊՈՒ ՖԱՈՐ



Ճարտարարութեան նախարար Ուալէ Ապու Ֆաուր երեկ հանդիպում մը ունեցաւ ելեմտութի նախարար Ալի Հասան Խալիլի հետ:

Հանդիպումին ընթացքին ըննարկուեցան Լիբանանի մէջ դեղորայքի արտադրութեան վերաբերող հարցեր:

Ապու Ֆաուր յայտնեց, որ Լիբանանի մէջ կը գործեն դեղորայքի արտադրութեան 11 գործարաններ, որոնք կը թէթեցնեն լիբանանցիներուն բեռը՝ դեղորայք ներածելու առումով:

Ապու Ֆաուր եւ Հասան Խալիլ որոշեցին դեղորայքի պատրաստութեան համար ներածուած հում նիւթը յաւելուած արժեքի տուրքէն զերծ պահել:

Ապու Ֆաուր ընդունեց նաեւ տնտեսական խորհուրդներու մէկ պատուիրակութիւնը, որուն հետ ըննարկեց 2020-ի պետական ամսականին վերաբերող առաջարկներ:

Շառ.ը՝ էջ 3

ՈՒԱՅԱՊ - ԲԱՍԵՍ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Թաուհիտ հոսանքի նախագահ, նախկին նախարար Ուիամ Ուահապ երեկ այցելեց Հրգապալայի ընդհանուր քարտուղարի տեղակալ Շէյխ Նայիմ Զասեմի, որուն հետ ըննարկեց լիբանանեան իրադարձութիւնները, ինչպէս նաեւ շրջանային զարգացումները:

Հանդիպումին ներկայ գտնուեցաւ նաեւ խորհրդարանի հարցերու պետական նախարար Մահմուտ Զումարի:

Հանդիպումին ընթացքին երկու կողմերը ընդգծեցին կառավարութեան աշխատանքը աշխուժացնելու կարեւորութիւնը՝ հեռու մնալով քաղաքական տարակարծութիւններէն, որպէսզի կարելի ըլլայ լուծել երկրին դիմագրաւած տագնապները, որոնցմէ հիմնական երկուքը՝ աղբի եւ ելեկտրականութեան տագնապները:

Ուահապ շեշտեց աղբահանումի տագնապը լուծելու կարեւորութիւնը՝ հաստատելով, որ այդ լուծումը պէտք է ըլլայ արմատական եւ պէտք է այդ տագնապին լուծման համար մշակել ռազմավարութիւն, ապապէս՝ աղբահանումի հարցը պիտի վերածուի շրջուն տագնապի մը:

Իր կարգին, Զումարի հաստատեց, որ Դիմադրութեան առանցքը կը ներառէ քաղաքական եւ համայնքային բազմազանութիւնը:

«ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՒՆՏԻՆ

- Առ ի քաջալերանք «Ազգակ»-ի աշխատանքներուն՝
Կարօ Սարգիսեան (Ֆրանսա) 200\$

Հովանաւորութեամբ՝
**ՄՈՒՍԱ ԼԵՌ-ԱՅՆՃԱՐԻ
ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ
80-ԱՄԵԱԿԻ
ՅՈՒՐԵԼԵՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ**

Կազմակերպութեամբ՝
**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՅՆՃԱՐԻ
«Պ. ՍԵՒԱԿ» ՄԱՍՆԱԾԻՂԻՆ**

**ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ԲԱՐԲԱՌՈՎ
ԵՒ
ՄՈՒՍԱ ԼԵՌ-ԱՅՆՃԱՐԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ԵՐԳԵՐՈՒ ՆՈՐԱՏԻՊ
ԵՐԳԱՐԱՆԻ ԳԻՆԵՉՕՐԵ**

Խօսք կ'առնէ՝ **ԵՍԱՅԻ ՀԱՄԱԹԵԱՆ**

Գեղարուեստական յայտագիր եւ հիւրասիրութիւն

Տեղի կ'ունենայ շաբաթ, 24 օգոստոս 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, «Սարգիս 2»-ի մէջ» ժողովրդային տան շրջափակին մէջ:

ՀՐԱԵՐ

«ԱԶԴԱԿ»-Ի ԱՐԱՐԵՐԻՆ
ԿԱՅՔԵԶԸ
www.aztagarabic.com

ԱՆԴՐԱԴՐԱԶ

ԹԱՓԱՆՑԻԿ ԵՂԱՐՇՈՎ ՊԱՏՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄ ՍԸ

Փարակուեյի արտաքին գործոց նախարար Խուան Էռնեսթո Վիլլամայոր յայտնեց, որ իր երկիրը Յճ-պալլան, Համաս շարժումը, Զայիտան եւ ՏԱՀԵՇ-ը ներառած է ահաբեկչական կազմակերպութիւններու ցուցակին վրայ:

Վերջին երկուքին պարագային ակնբերւ է, որ քայլը շատ ուշացած է: Հարաւային ամերիկեան երկիրը պետք էր Զայիտան արդէն 11 սեպտեմբեր 2001-էն ետք ճանչցած ըլլար իբրեւ ահաբեկչական կազմակերպութիւն, եւ ոչ թէ այդ ցնցիչ ու մեծ դէպքէն 18 տարի ետք միայն: Ուշացումը բարացուցական է. այս քայլին իսկական թիրախները Յճպալլան ու Համասն են եւ անոնց ճամբով Իրանը եւ ոչ թէ Զայիտան ու ՏԱՀԵՇ-ը, որոնց անունները մետասաներորդ պահուն աւելցուած են իբրեւ ծածկոյթ:

Դժուար է չնկատել, թէ որոշումը որդեգրուած է Իրան-Միացեալ Նահանգներ լարուածութեան պայմաններուն մէջ՝ ընդառաջելով համացամաքամացի մեծ եղբօր, ինչպէս նաեւ անոր կրտսեր եղբօր՝ Իսրայէլի խնդրանքին, մասնաւոր երբ Փարակուեյի մէջ Ամերիկայի դեսպանը եւ Իսրայէլի արտաքին գործոց նախարարը այդ քայլը կը նկատեն «կարելորդ», եւ վերջինս կ'աւելցնէ, թէ ատիկա «կը նպաստէ Իրանի կամակատարներուն դէմ համաշխարհային պայքարին»՝ այդպիսով հաստատելով, որ անոր իսկական նպատակը ահաբեկչութեան դէմ պայքար չէ, այլ՝ Իրանի դէմ պայքարը:

Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու իր կարգին Նշեց, թէ իր երկիրը աշխատանք կը տանի, որ այլ երկիրներ եւս նոյն քայլին դիմեն՝ այդպիսով փարատելով Փարակուեյի որոշումին ետին ամերիկեանին կողքին նաեւ իսրայէլեան ազդակի գոյութեան շուրջ կասկածները:

Այս բոլորէն կարելի է եզրակացնել, թէ Փարակուեյ ձախողած է ստեղծել պետք եղած ծածկոյթը, որովհետեւ այդ որոշումը պատած է խիստ թափանցիկ շղարշով մը միայն:

ԿԱՅՐԱՄ ԷՄԻՆԵՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ...

Շարունակուած Ա. Էջէն

յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ուալիտ ժոմարլան դէմ կը յարձակի, երկրին բոլոր քաղաքական ուժերուն դէմ յարձակած կ'ըլլայ», ըսաւ ան:

Աղբահանումի տազնապին մասին հարցումի մը պատասխանելով՝ վարչապետ Յարիրի շեշտեց, որ ո'չ իսլամը պատրաստ է ընդունելու քրիստոնեաներուն աղբը եւ ո'չ ալ հակառակը: «Ասիկա տեղայնական ցեղապաշտութեան Նշան է եւ ամօթալի երեւոյթ, որմէ պետք է ամչնալ», ըսաւ ան:

ԿԱՐՉԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՐԻՔԻ ՆԻՍՏ



Երեկոյեան ժամը 5:30-ին, վարչապետ Յարիրի նախագահեց նախարարական յանձնախումբի նիստի մը, որուն ընթացքին ընկալուեցաւ արգահանումի տազնապի լուծման հարցը:

Նիստէն ետք կենսոլորտի նախարար Ֆատի ժոյսաթի յայտնեց, որ համաձայնութիւն գոյացած է յառաջիկայ երեքշաբթի օր աղբահանումի թղթածորանի վերաբերող կառավարութեան ճակատագրական նիստ մը գումարել:ստոնեաներուն աղբը եւ ո'չ ալ հակառակը:

«ՃԱՐՏԱՐԱՐՈՒՄԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ...»

Շարունակուած 2-րդ Էջէն

Նշեց, որ ճարտարարուեստի նախարարին այցելեց նաեւ մագործներու եւ արջառներու առնետրականներու համադաշնակցութեան մէջ պատուիրակութիւնը, որուն հետ ընկարկեց սպանդանոցներուն վերաբերող հարցեր:

Ապու Ֆաուր յայտնեց, որ 15 օր ետք ճարտարարուեստի նախարարութիւնը պիտի փակէ այն սպանդանոցները, որոնք ապօրինի կերպով կը գործեն եւ առողջապահական չափանիշները չեն ամբողջացներ:

ՈՒՄԻՈՅ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Փեսքովի համաձայն, բանակցութիւնները եղած են յազեցած, կառուցողական եւ վստահելի:

Ըստ մամլոյ բաւերին, անդրադարձ կատարուած է շրջանային տազնապներուն՝ Պալքաններ, Լեռնային Ղարաբաղ, բաւական լուրջ խօսած են կլիմայի փոփոխութիւններու եւ Հիւսիսային բելեռի իրավիճակին մասին:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱԿԱՆԵՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարի վերանորոգման աշխատանքները սկիզբ առին 20 օգոստոս 2019-ին եւ պիտի տեւեն շուրջ երկու ամիս: Վերանորոգման ծախսերը ստանձնած են հիւսիսային Ամերիկայի արեւմտեան թեմի ազգայիններ տեր եւ տիկին Յովսէփ եւ Էլիզապեթ Պոյաճեաններ:



Արամ Ա. վեհափառ հայրապետին գահակալութեան շուրջ 25 տարիներուն ընթացքին երրորդ անգամ ըլլալով մայր տաճարը կ'ենթարկուի ամբողջական վերանորոգման՝ բնականաբար յարձականքով կատարուած բարեկարգման որոշ աշխատանքներու առընթեր:

Մայր տաճարի վերանորոգման շրջանին Ս. եւ Ամմաի պատարագները պիտի մատուցուին տաճարին կից գտնուող դամբարանի մատրան մէջ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԵՐԱՑՈՒՄ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՆՁՆՈՐԴԱԿԱՆ ԸՆԹՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 8 յունիս 2019-ին, Բերիոյ հայոց թեմի Ազգային երեսփոխանական ժողովը առաջնորդ ընտրեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբաններէն Մասիս Եպս. Չոպույեան:

Արամ Ա. կաթողիկոս Ազգային երեսփոխանական ժողովին ուղղած իր հայրապետական գիրով վաերացուց առաջնորդի ընտրութիւնը եւ յաջողութիւն մաղթեց Նորընտրի առաջնորդ արքեպիս Խոր՝ իրեն վստահուած առաքելութեան մէջ: Միաժամանակ, վեհափառ հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց Նախորդ առաջնորդ Շահան արք. Սարգիսեանին՝ անցող 15 տարիներուն իր Նուիրեալ ծառայութեան համար:

Յայտնեց, որ Շահան արքեպիսը Անթիլիասի մայրավանք վերադառնալով՝ ստանձնեց մատենադարանապետի պաշտօնը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՐՄԵ ԱՐՑԱԽԻՆ...

Շարունակուած Ա. Էջէն

ըսաւ, թէ եթէ Թրամփի վարչակազմին որոշումը որեւէ կերպով պայմանաւորուած է Հայաստանի կողմէ խիստ անհրաժեշտ բժշկական օգնութեան ցուցաբերումով եւ չպայթած զինամթերքը հեռացնելու ջանքերով, ապա այդ մասին պետք է բարձրաձայն յայտնեն:

Ան աւելցուց, որ 1998-էն ի վեր, Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը առաջամարտիկի դերին մէջ է Արցախին ամերիկեան օգնութեան ապահովելու գործին մէջ՝ միեւնոյն ժամանակ լուսարձակի տակ պահելով Ազգայեանի կողմէ շարունակուող շրջափակումը եւ այդ երկրի բռնապետ Իլ-համ Ալիեւի կողմէ գինադադարի խախտումները՝ աւելցնելով. «Ամերիկայի կողմէ նիւթական աջակցութեան դադրեցումը հիմա, երբ այսքան մօտ ենք Արցախի ամբողջական անկաւաքեմման հասնելուն, սիւալ

ազդանշան մը պիտի ըլլայ Ալիեւի վարչակազմին, որ կը շարունակէ մերժել շրջանին մէջ լարուածութիւնը մեղմացնելու ուղղուած ողջմիտ առաջարկները, ներառեալ՝ արձակագններու հեռացումը, ԵԱՀԿ-ի յաւելեալ դիտորդներու ներկայութիւնը եւ կրակոցներու յայտնաբերման համակարգերու տեղակայումը»:

Նշեց, որ Ներկայացուցիչներու տան 89 եւ Ծերակոյտի 22 անդամներ, ներառեալ Նախագահի պաշտօնի թեկնածուներ, իրենց զօրակցութիւնը յայտնած են աջակցութիւնը շարունակելու ջանքերուն:

Պատասխանելով Ազգայեանի տրամադրուող ամերիկեան աջակցութեան աճին պատճառներուն մասին հարցումին՝ Ջուլեան ըսաւ, թէ Պաքոյ այդ նպատակին հասնելու համար սկսած է շահագործել Իրանի հետ ամերիկեան տազնապը:

ԿԱՐՈ ՓԱՅՆԱՆ ԵՒ ԷՊՐՈՒ ԿԻՒՆԱՅ...

Շարունակուած Ա. Էջէն



Հաւարային Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի անդամներ, ուղեկից կազմակերպութիւններու՝ ԴՕՄ-ի, ՀՄԸՄ-ի եւ Համազգայինի, շրջանային թէ տեղական ղեկավարներ, երիտասարդական կազմակերպութեան եւ սկստւտներու ներկայացուցիչներ: Հանդիպումին իր մասնակցութիւնը բերաւ Ընկերվար միջազգայնականի մէջ ՀՀ-ի ներկայացուցիչ Մարիո Նալպանտեան: Հիւրերուն բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ ՀՀ-ի Հարաւային Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Ջանիկ Զէչեան, որ կուսակցութեան Հարաւային Ամերիկայի կառոյցին եւ ուղեկից կազմակերպութիւններուն անունով ամբողջական զօրակցութիւն յայտնեց իրենց առաքելութեան: Ելոյթ ունեցան Կիւնայ եւ Փայլան, որոնք հակիրճ ձեւով ներկայացուցին Թուրքիոյ մէջ այսօր տիրող շատ մտահոգիչ իրավիճակը, իրենց պայքարն ու մասնաւորաբար կիներու դերակատարութիւնը: Անոնք անդրադարձան նաեւ շրջան իրենց այցելութեան, որ իր տեսակին մէջ առաջինն էր՝ գոհունակութիւն յայտնելով իրենց ունեցած քաղաքական հանդիպումներուն, ինչպէս նաեւ մամլոյ անդրադարձին մասին: Մեր նպատակը, ըսաւ մասնաւորաբար Փայլան, Հարաւային Ամերիկայի

հանրային կարծիքին ներկայացնելն է Երտողանի հալածական քաղաքականութեան սպառնալիքը, որ կրնայ Նոր ցեղասպանութեան յանգիլ: Թուրքիոյ ժողովրդավարացման համար մեր պայքարը ձեր ալ պայքարն է, ըսաւ ան՝ դիմելով ներկաներուն, որոնց կոչ ուղղեց Նոր սերունդին սորվեցնելու, որ Արեւմտեան Հայաստանը Նոյնքան իրենց հայրենիքն է, որքան Հայաստանի Հանրապետութիւնը, եւ համոզում յայտնեց, որ Թուրքիոյ ժողովրդավարացումով եւ ազգայնականութեան վերածումով Հայոց ցեղասպանութիւնը պիտի ճանչցուի: Տեղի ունեցաւ հարցուպատասխան, որուն ընթացքին ներկաները հետաքրքրուեցան Թուրքիոյ մէջ հայ համայնքին իրավիճակով, ինչպէս նաեւ՝ Հարաւային Ամերիկայի իրենց այս շրջապտոյտէն իրենց ունեցած սպասումներուն մասին: Հանդիպման վերջաւորութեան ՀՄԸՄ-ի Արարատ սկստական խումբի ղեկավարները Կիւնային եւ Փայլանին Նուիրեցին փողկապներ, որով, ինչպէս Կեդրոնական կոմիտէի անդամներէն մեկը փակման խօսքին մէջ ըսաւ, կը վերանորոգուի միասնական պայքարի ուխտը:

ԾԱՆՈՒ ԶԱՐԿԱՔԱԺԻՆ

Տորայի հրապարակին մօտ, 124 քառ. մետր, 2 Նշչասենեակ, հիւրասենեակ, ճաշասենեակ, 2 պատշգամ եւ յարակից մասեր:

Դիմել՝ հեռ. 03-335368:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն



Արցախի նախագահին հետ հանդիպումին ընկարկեցան Արցախի եւ Ազգայեանի գիտուած ուժերու շփման գիծին մէջ տիրող իրավիճակին վերաբերող հարցեր:

Նախարար Մայիլեանի հետ ընկարկուեցան Ազգայեանի մէջ գտնուող ռազմագերի Արայիկ Ղազարեանի հարցը եւ անոր հայրենիք վերադարձի կարելիութիւնները՝ ընդգծելով միջազգային մարդասիրական իրաւունքին հետեւելու տազնապի կողմերուն ստանձնած պարտաւորութիւններու գործադրութեան անհրաժեշտութիւնը: Կողմերը միտքեր փոխանակեցին Արցախի եւ Ազգայեանի գիտուած ուժերու շփման գիծին մէջ տիրող իրավիճակին, ինչպէս նաեւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչի գրասենեակին կողմէ կատարուող դիտարկումներուն վերաբերեալ:

Չօր. Կարէն Արախամեանի հետ հանդիպումին միտքեր փոխանակուեցան արցախեան-ազգայեանական տազնապի լուծման գծով տարուող աշխատանքներու, Ազգայեանի մէջ յայտնուած գիտուորի ճակատագիրին եւ սահմանագիծին վրայ տիրող մարտավարական իրադրութեան վերաբերեալ:

ՓԱՐԱԿՈՒՅ ՀԸՉՊԱԼԼԱՆ, ՀԱՄԱՍԸ...

Շարունակուած Ա. Էջէն

մասնաւորաբար Հարաւային Ամերիկայի մէջ Նուիրատուութիւններ հաւաքելու իմաստով, եւ մեր երկիրներուն պիտի արտօնէ միջազգային ահաբեկչութեան արգիլման եւ անոր դէմ պայքարի մէջ աւելի սերտ ու ազդու կերպով գործակցելու»:

Փարակուեյի քայլը ողջունեցին նաեւ Իսրայէլի վարչապետն ու արտաքին գործոց նախարարը: Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու յայտնեց, որ իր երկիրը աշխատանք կը տանի, որ այլ երկիրներ եւս նոյն քայլին դիմեն:

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Եիսրայէլ Զազ այդ քայլը նկատեց «կարելորդ»՝ աւելցնելով, որ անիկա «կը նպաստէ Իրանի կամակատարներուն դէմ համաշխարհային պայքարին»:

ՈԱՅԱԶԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՈՒ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂՈՐՈՐՅՆԵԸ

Օրինութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ՆԱՐԵԿ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Լիբանանի հայոց թեմի առաջնորդ

Շաբաթ, 24 օգոստոս 2019,
առաւօտեան ժամը 10.00-ին, սուրբ պատարագ

Պատարագիչ՝
ԱՐԺ. Տ. ՌՈՒԲԵՆ ԶԻՆՅ. ՄԻՍԻՍԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ հայորդիները՝ մասնակցելու եկեղեցական արարողութիւններուն:

ԹԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ ՉԱՅԼԵԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՐՈՐԻՉ ԵԿԵՐԵՑՈՅ ԵՒ ԵՐԱԿԱՅԻՑ

ԱՖԻԼ
ARMENIAN MUTUAL FUND

Since 1998

20 Years of Commitment

" The BEST WAY to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others "

Mahatma Gandhi

Health Insurance

Travel Insurance

GoodCare Clinic

Car Insurance

Health Clubs

Home Medical Equipment

BOB - Western Union

University and Student Fund

«ՅՈՐԵ» Health Magazine

www.afhil.com | AFHIL Mutual Fund
Bourj Hammoud, Arin Center, 4th Floor | T. 01 242 556/7

ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Այն միութիւններն ու այն անհատները, որոնք կ'ուզեն դասախօսական ձեռնարկներու եւ ընդունելութիւններու համար «Ազգայն»-ի «Փիւնիկ» սրահը օգտագործել, կրնան հեռաձայնել «Ազգայն»-ի խմբագրատուն, հեռ. 258526-260115-241274, երկուշաբթին ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5:30-էն մինչեւ ժամը 7:30:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԼ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՅՈՒՑԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Միացեալ Նահանգներու ինտերոդ շրջանի վերաքննիչ դատարանը 8 օգոստոս 2019-ին որոշած է մերժել քանի մը ամերիկահայերու կողմէ ներկայացուած երկու դատական հայցերու դէմ բողոքները. անոնք փոխհատուցում կը պահանջէին Թուրքիայէն եւ անոր երկու դրամատուներէն՝ Յայոց ցեղասպանութենէն կարճ ժամանակ անց իրենց ունեցուածքը բանագրաւած ըլլալուն համար:

Առաջին դատական հայցը դէկտեմբեր 2010-ին ներկայացուցած են Ալեքս Պաքալեանը, Ամայիս Յարութիւնեանը եւ Ռիթա Մահտեսեանը՝ Թուրքիոյ Կեդրոնական դրամատուներէն եւ «Հիրաաթ պաւքասը»-էն պահանջելով 65 միլիոն տոլար: Երկրորդ դատական հայցը ներկայացուցած են Դաւիթ Դաւոյեանը («Կարպիս Դաւիթ Դաւոյեան»-ի գոյքի կառավարիչ) եւ Յրայր Թուրապեանը՝ Թուրքիոյ, Թուրքիոյ Կեդրոնական դրամատան եւ «Հիրաաթ պաւքասը»-ի դէմ:

Միացեալ Նահանգներու վերաքննիչ դատարանը հաստատած է դատաւոր Տոյի Ճիի 2013 թուականի որոշումը, որով ան մերժած էր երկու դատական հայցերը՝ յայտարարելով, որ՝ «Համաձայն քաղաքական հարցի հայեցակարգի, կարգ մը հարցերու պարզաբանումը, տուեալ պարագային՝ որոշելը, թէ արդեօք Թուրքիոյ գործողութիւնները ցեղասպանութիւն էին, պէտք է լուծուի գործադիր իշխանութեան, այլ ոչ թէ դատարաններու կողմէ», կը տեղեկացէլ Court House News Service:

Սակայն վերաքննիչ դատարանը այլ պատճառաբանութեամբ մերժեց վերաքննիչ բողոքը՝ պնդելով, որ հայկական երկու դատական հայցերու վաղեմութեան ժամկէտը անցած է: 2006-ին Քալիֆորնիոյ օրէնքը այսպիսի դատավարութիւններու համար վերջին ժամկէտ սահմանած էր 2016 թուականը՝ յայտարարելով, որ «որեւէ հայց, ներառեալ՝ Յայոց ցեղասպանութեան գոհին կողմէ ներկայացուած որեւէ չուծուած հայց, կամ բերուած՝ Յայոց ցեղասպանութեան գոհի ժառանգ իւր շահառուի կողմէ, որ կը բնակի այս Նահանգը՝ պահուած կամ թալանուած տնտեսական գործուներութեան վճարման կամ վերադարձելու պահանջով, պէտք չէ մերժուի վաղեմութեան ժամկէտի պահանջը կատարած չլլալուն համար, եթէ հայցը ներկայացուած է մինչեւ 31 դէկտեմբեր 2016 եւ կամ անկէ առաջ»:

Ցաւօք, 2012-ին, Ինտերոդ շրջանի դատաւոր Միզլըն Փ. Կրեպլըը «Մովսեսեանը ընդդէմ Victoria Versicherung AG»-ի գործով անվաւեր հոչակեց Քալիֆորնիոյ օրէնքը, որով կ'երկարէր ապահովագրական յստակ պահանջներ ներկայացնելու ժամկէտը Յայոց ցեղասպանութեան հիման վրայ: Դատարար Կրեպլըը գրած է, որ՝ «Օրէնքը կանխուած է ըստ արտաքին գործերու հայեցակարգի», նշուած է Metropolitan News-Enterprise-ի մէջ:

Վերաքննիչ դատարանի 8 օգոստոս 2019-ի որոշումը հակասական է այն իմաստով, որ մինչ դատաւոր Էնտրիւ Յուրվից, որ գրած է վերաքննիչ դատարանի որոշումը, ընդունած է Յայոց ցեղասպանութիւնը, անտեսած է այն փաստը, որ ցեղասպանութիւնները վաղեմութեան ժամկէտ չունին, հետեւաբար, անկախ անկէ, թէ որքան ժամանակ անցած է, ցեղասպանութեան հետ կապուած դատական գործերը չեն կրնար մերժուիլ ժամկէտը անցած ըլլալու հիմքով:

Անա թէ ի՞նչ գրած է դատաւոր Յուրվից վերաքննիչ դատարանի որոշման մէջ. «1915-էն մինչեւ 1923 ժամանակահատուածը, այն, ինչ որ յաճախ կը կոչեն Յայոց ցեղասպանութիւն, Օսմանեան կայսրութիւնը կոտորած, բռնի տեղահանած եւ մահուան դատապարտած է իր 1,5 միլիոն հայազգի քաղաքացիները՝ բռնագրաւելով մահաճանքներու եւ տեղահանութեան ռուտինային»:

Վերաքննիչ դատարանի որոշման մէկ այլ բաժնին մէջ, «Փաստեր» ենթակերպագիրի տակ, դատաւոր Յուրվից անելոցած է հետեւեալ մեկնաբանութիւնները Յայոց ցեղասպանութեան վերաբերեալ. «Համաշխարհային Ա. պատերազմի տարիներուն Օսմանեան կայսրութիւնը սկսաւ բռնի տեղահանել իր հայ հպատակները՝ բնակավայրերէն դէպի անապատ. այս պատճառով անելի քան մէկ միլիոն բնիկ հայեր մահացան: Կայսրութիւնը բռնագրաւեց Յայոց ցեղասպանութեան գոհերու անշարժ գոյքը»:

Դատաւոր Յուրվից համաձայնած է հայցուորներու դատական հայցերու մէջ գոյութիւն ունեցող պնդումներուն: Ան գրած է. «Հաշուապահական կուտակման մեր վերլուծութեան համար մենք կ'ընդունինք հայցուորներու մեղադրանքներուն ճշմարտացիութիւնը այն մասին, որ Օս-

մանեան կայսրութիւնը ապօրինաբար բռնագրաւած է հայցուորներու Նախնիներուն ունեցուածքը, կամ կայսրութիւնը եւ դրամատուները գոյքը խնամառութեան յանձնած են թրջական օրէնսդրութեամբ, սակայն, անելի ուշ, ապօրինաբար իրաժարած են զայն վերադարձնել: Եթէ Նախնական իւրացումը սխալ էր, ապա հայցուորներու պահանջները կուտակուած են մինչեւ 1923: Եթէ գոյքը խնամառութեան յանձնուած էր, ապա հայցուորները կ'ընդունին, որ՝ «1928 եւ 1929 թուականներուն ընդունուած օրէնքները պաշտօնապէս վերջ դրած են Թուրքիոյ կեղծ փորձին՝ անշարժ գոյքը օրինական հայ տերերուն վերադարձնելու»: Այսպիսով, հայցուորներուն Նախնիները տաւր եւ անելի տարիներ առաջ պէտք էր շատ լաւ գիտնային, որ Թուրքիա մտադիր էր վերադարձնելու իրենց ունեցուածքը»:

Դատաւոր Յուրվից դժգոհած է, որ դատական հայցերը յարուցուած են Յայոց ցեղասպանութենէն տասնամեակներ անց, ինչ որ զանոնք ժամանակավրէպ կը դարձնէ: «Մենք կասկած չունինք, որ Օսմանեան կայսրութեան վայրագութիւններէն վերապրածները ահեղի դժուարութիւններ կրած են իրենց ունեցուածքի բռնագրաւումէն ետք: Իրօք, մենք ճիշդ կը համարենք այն մեղադրանքները, որոնք առկա են իրաւական բողոքներու մէջ, եւ թէ՝ «Անհնար էր հայցուորներու Նախնիներուն համար փոխհատուցում պահանջել՝ իրենց թալանուած ունեցուածքի համար, կամ կեդրոնական որեւէ այլ բանի վրայ, բացի իրենց կենքը վերակառուցելէ»: Սակայն այս դատական հայցերը ներկայացուած են ոչ թէ Յայոց ցեղասպանութեան գոհերու, այլ անելի ճիշդ՝ Միացեալ Նահանգներու բնակիչներու կողմէ, որոնք Նախնիներէն շատերը տասնամեակներ առաջ տեղափոխուած են այս երկիրը: Իսկ ներկայ հայցուորները չեն փորձած այս հայցերը դատական կարգով մինչեւ 2010 թուական հետապնդել»:

Ամերիկահայերու փաստաբանները զայրոյթով արձագանգած են վերաքննիչ դատարանի որոշման: Pierce Bainbridge Beck Price & Hecht փաստաբանական գրասենեակէն Զեթթըն Լի Պոյտ, ներկայացնելով երեք ամերիկահայեր, որոնք Նախնիներուն պատկանող մօտաւորապէս 50 հեկտար իողապարածք բռնագրաւուած է, ըսած է Metropolitan News-Enterprise-ին.

«Տխուր օր է ամերիկահայերու համար, երբ Միացեալ Նահանգներու դատարանը զանոնք զրկած է արդարադատութեան հասնելու բոլոր հնարաւորութիւններէն, մերժած է հաշուի առնել կամ նոյնիսկ ընդունիլ Յայոց ցեղասպանութեան մեղմացուցիչ հանգամանքները եւ զանոնք առանց դարմանման միջոցի ձգած է Թուրքիոյ դէմ, որ կը շարունակէ պահել եւ օգտագործել հայերուն թալանուած ունեցուածքը՝ մնալով անպատիժ»:

Metropolitan News-Enterprise մէքերած է «Կիրակոս եւ Կիրակոս» փաստաբանական գրասենեակէն Մարկ Կիրակոսը, որ կը ներկայացնէ հայցուորներու երկրորդ խումբը.

«Թրջական լուպին տասնամեակներ շարունակ գնած եւ վճարած է Միացեալ Նահանգներու գործադիր իշխանութեան եւ արտաքին գործոց Նախարարութեան: Դժբախտաբար, դատարան իշխանութեան շատ քիչ տարբերակներ կը մնան՝ թրջական լուպիստական մեքենային ճշգրտ կեղծիքը շտկելու համար»:

Վերաքննիչ դատարանը դիւրին ելք մը գտած է՝ իր որոշման հիմք ընդունելով Քալիֆորնիոյ օրէնքի հակասահմանադրականութիւնը, որ հայցուորներուն անելի շատ ժամանակ կու տար իրենց հայցերը ներկայացնելու համար: Եթէ Վերաքննիչ դատարանը իր որոշումը հիմնաւորել Ցեղասպանութեան վրայ, ապա վաղեմութեան ժամկէտի հարցը անտեղի կ'ըլլար, եւ որոշում կը կայացւեր այն մասին, որ Թուրքիոյ կառավարութիւնը եւ անոր երկու դրամատուները օրինական պատասխանատուութիւն կը կրեն հայկական գոյքի բռնագրաւման համար:

Յոյսով եմ, որ ամերիկահայ հայցուորները կը դիմեն Միացեալ Նահանգներու Գերագոյն դատարան՝ չեղեալ յայտարարելու համար այս անարդար որոշումը:

ՅՈՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ
«Քալիֆորնիա Զուրիքը» թերթի
իրատարակիչ եւ խմբագիր

Արեւելահայերէնի թարգմանեց՝
ՌՈՒԶԱՆԱ ՄԱԳԵԱՆ
Արեւմտահայերէնի վերածեց՝
ՄԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ



29 յուլիսէն 2 օգոստոս տեղի ունեցած Հայ կրթական հիմնարկութեան հովանաւորութիւնը վայելող Շուշիի համահայկական 8-րդ փառատօնին Այնճարի Ազգային «Յառաջ-Գ. Կիւլալեկեան» վարժարանի 11-րդ կարգի աշակերտներէն Պարոյր Սթանպուլեանը 6 երկիրներէ 127 մասնակիցներու մէջ ասմունքի մրցանքին տիրացաւ 2-րդ մրցանակին եւ պարգեատրուեցաւ Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեանի ներկայութեամբ կայացած յատուկ հանդիսութեան ընթացքին՝ Արցախի Հանրապետութեան կրթութեան, գիտութեան եւ մարմնակրթութեան Նախարար Նարինէ Աղաբալեանի կողմէ:



ՇԵՋՍՓԻՐԻ ԱՆՈՒՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ Գ. ՀԱՍԱԳՈՒՄԱՐԸ ՏԵՐԻ ՈՒՆԵՑԱՎ ԿԵՆԵՏԻԿԻ ՄԷՋ

Շէյքսպիրի անուան հայկական ընկերակցութեան երրորդ համագումարը տեղի ունեցաւ Կենտրոնի Մուրատ-Ռաֆայելեան վարժարանին մէջ՝ Միթթարեան միաբանութեան համար պապական պատուիրակ Լեւոն արք. Չեքիեանի հովանաւորութեամբ:



Հանդիպման, որ տեղի ունեցաւ 15 յուլիսին, մասնակցեցան ընկերակցութեան պատուոյ Նախագահ, հայրենի բանաստեղծ եւ բանասեր Դերիկ Եղոյեան եւ հիմնադիր Յասմիկ Սայմըր, ինչպէս նաեւ՝ Միացեալ Նահանգներէն, Միացեալ Թագաւորութենէն, Ֆրանսայէն, Յունաստանէն, Լեհաստանէն, Արժանթինէն եւ ուրիշ երկիրներէ եկած մասնագետներ, որոնք իրենց գեկուցումները կարդացին յայտնի անգլիագիր թատերագիրին կապուած հարցերու շուրջ, ինչպէս՝ «Շէյքսպիր եւ օտարները», «Շէյքսպիրի թարգմանութիւնները», «Շէյքսպիրի եւ Կենտրոնի առասպելը» եւ այլ խիւրթ:



Բացման խօսքը արտասանեց Սերոբ վրդ. Զամուրլեանը, որ անդրադարձաւ Միթթարեան միաբանութեան շէյքսպիրեան թարգմանութիւններու աւանդութեան, ապա լրագրող Անետիս Հանեանը հակիրճ կերպով ներկայացուց Կենտրոնի հայ գաղութի պատմութիւնը:



Այս տարուան համագումարը նուիրուած էր Վահրամ Փափագեանի մահուան 130-ամեակին: Փափագեան համարուած էր հորիզոնային Միութեան լաւագոյն շէյքսպիրեան դերասանը, մասնաւորաբար յայտնի՝ իր Օթելլոյի դերակատարութեամբ, ան նաեւ Մուրատ-Ռաֆայելեան վարժարանի սան եղած է:

ցութեան» հասկացութիւնը: Միևնրեւ նման գործելակերպը վրիպել է 30 տարուայ անկախ Հայաստանի իշխանութիւնների ուշադրութիւնից: Ի հարկէ հայկական մշակոյթն այդ ժամանակահատուածում զարգացել է հայրենիքում եւ դրսում, սակայն արտաքին գործերի Նախարարութիւնն աշխուժօրէն չի մասնակցել կամ մատնելի արանքով է Նայել պետական նշանակութեան այդ գործին:

Իսկ օրերս ԴՀ ԱԳԱ... լուծարեց լաւ թէ վատ գործող «Մշակոյթի եւ մարդասիրական համագործակցութեան» վարչութիւնը: NO COMMENT.

Ստեղծուել է հակասական իրավիճակ: Դարերի խորքից եկող հայկական մշակութային արժեքները, որոնք կարող են շարժել քաղաքակիրթ աշխարհի Նախանձը, որոնք իրենց հաւասարը չունեն ժամանակի եւ տարածութեան մէջ, ըստ արժանւոյն գնահատուած չեն, կամ ճանաչուած չեն երկրագնդի շատ ծագերում:

Եթէ մենք ունենայինք պետութեան կողմից մշակուած եւ ընդունւած ծրագիր, ապա պարզ կը պատկերացնէինք այն կենսական կարեւորութիւնը, որ հանրապետութեան համար ներկայացնում է ճիշդ եւ աշխուժ մշակութային դիւանագիտութեան իրագործումը երկրի ներսում եւ նրա սահմաններից անդին:

Երբ մենք խօսում ենք «մշակութային դիւանագիտութիւն» քաղաքական գործօնի մասին, դրա մէջ տեսնում ենք «ճանապարհային քարտէս» երկու ուղղութիւն:

1.- Ազգային մշակոյթի արժեքների ծրագրաւորում, մշակում, ծառայում:

ԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԵԱՆ
Արտակարգ եւ լիազօր դեսպան, քաղաքական գիտութիւնների թէկնածու, որոցնետ

ԵԹԷ ԶՈՒՆԵՄ ՆԱԻԹ ԿԱՄ ԿԱՅԸ, ԳՈՐԾԱՐԿԻՐ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՐԺԷՔՆԵՐԴ

21-րդ դարում տեղի է ունենում պետութեան արտաքին եւ ներքին քաղաքականութեան սերտաճում եւ միափխում, որի արդիւնքում դիւանագիտութիւնն ստանում է նոր որակ ու տեսակ: Գոյանում է առանձնայատուկ մի միասնութիւն, որն անուանում է խթանող դիւանագիտութիւն: Սա նոր, այլ որակի դիւանագիտութիւն է, որի կիրառումը մեծապէս բարձրացնում է արտաքին քաղաքականութեան օգտակար գործողութեան գործակիցը: (Իտալական կը լինէր, եթէ հայկական դիւանագիտութիւնը իւրացնէր այս **մոտեցը**):

Խթանող դիւանագիտութեան առանձնայատկութիւնն այն է, որ այն միակցում է պետական եւ ոչ պետական դիւանագիտութեան գործիքակազմերը: Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում այդ «ոչ պետական դիւանագիտութիւնը»: Այն ունի մի քանի անուանում՝ հանրային, ժողովրդական, Միացեալ Նահանգներում՝ քաղաքացիական (citizen diplomacy): Անուանումը չի փոխում առարկայի էութիւնը: Այն հիմնուած է բացառապէս «փափուկ ուժի» («soft power») վրայ, որը ներառում է ժամանակակից կենսից բոլոր ոլորտները (ոչ պետական) եւ պետութեան ներքին ու արտաքին քաղաքականութեան վայրաշարժն է, շարժիչ ուժը: Այն պետական դիւանագիտութիւնը, որը չի միանում, գոյգ չի կազմում հանրային դիւանագիտութեան հետ, դատապարտուած է ծախողման: (Հայաստանի ԱԳԱ-ն պէտք է որ այդ վտանգը պարզ պատկերացնի):

Այժմ անդրադառնալք նորագոյն դիւանագիտութեան գործիքակազմում յատուկ տեղ գրաւող մշակութային դիւանագիտութեանը: Համաշխարհայինացման արդիւնքում փոխկապակցուած աշխարհում մշակութային դիւանագիտութիւնն առանցքային դեր է խաղում խաղաղութեան եւ կայունութեան ապահովման գործում, ներառուած է համաշխարհային հանրութեան կարծիքի ձեւաւորման, միջազգային յարաբերութիւնների կայացման ու պետական քաղաքականութեան իրականացման վրայ:

... Մշակութային դիւանագիտութիւնը ծագել է Ֆրանսայում: Դեռ 1883 թուականին՝ մշակութային «Ալեանս Ֆրանսեզ» հասարակական կազմակերպութեան երեսն գալով, որն այսօր գործում է մօտ 150 երկրում: Ֆրանսան աշխուժօրէն եւ նպատակաւորուած վարում է մշակութային դիւանագիտութիւն՝ պետական ու ոչ պետական մակարդակով: Ֆրանսական արտաքին գործերի Նախարարութիւնում գործում է Համագործակցութեան եւ Ֆրանսերէն լեզուի բաժանումը, որը մշակում եւ իրականացնում է գրականութեան, արուեստի, գիտութեան, կրթութեան, ֆրանսերէն լեզուի ուսուցման եւ տարածման ծրագրեր: Դեկտավարում է «Արտասահմանում ֆրանսերէն լեզուի դաստիարակման գործակալութեան» եւ «Ֆրանսական արուեստագետների ընկերակցութեան» աշխատանքները եւ այլն: ԱԳԱ-ն հսկում եւ ուղղորդում է Ֆրանքոֆոնիայի զարգացման գործընթացը:

Այնպէս որ, ֆրանսական հարուստ փորձի փոխառումը կ'օգնէր հայկական մշակութային դիւանագիտութեան կայացմանը, ինչպէս նաեւ՝ Ֆրանքոֆոնիայի երկրների հետ յարաբերութիւնների զարգացմանը:

Ի դեպ, մշակութային դիւանագիտութիւնը՝ որպէս քաղաքականութեան տարատեսակ, միանգամայն համընկնում է Հայաստանի ներկայ իշխանութիւնների հոչակած յոյացքի հետ, համաձայն որի, տնտեսութիւնը պէտք է լինի ներառական, այսինքն ունենայ դրամում հանրութեան բոլոր խւերի մասնակցութիւնը: Հա՛րկ է նշել, որ «բոլոր խւերի մասնակցութիւն» նշանակում է հանրային դիւանագիտութեան աշխուժ ներկայութիւնն այստեղ եւս: Եւ ոչ միայն: Եթէ տնտեսութիւնը պէտք է ընթանայ նման ճանապարհով, անտրամաբնական կը լինի պատկերացնել կենսից միւս բնագաւառների, այդ թւում՝ դիւանագիտութեան, այլեւրպ զարգացումը:

Այնպէս որ, մշակութային դիւանագիտութիւնը, բնականաբար, չի կարող դուրս մնալ քաղաքականութեան «բոլոր խւերի մասնակ-

ՅԱԶՈՐԴԱԿԱՆ ՆՈՒՎՃՈՒՄՆԵՐԸ ՆՈՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԿԸ ՄՂԵՆ ԵՈՒԻՈԶԸ

Տասնկի կարգավիճակ են հազիւ ձերբազատած եւ շնորհիւ իր արտակարգ տաղանդին, յանկարծ, առանց մասնաւոր ճիգի, Եւրոպի տարիներու երազանքը իրականութիւն կը դառնար, ու երկինքները յարմարաւտ բացառիկ պայմաններ կը ստեղծուէին իրեն համար: Այդ օրէն ի վեր առհաւակասօրէն իր մէջ կուտակուած լիցքաթափուելու ներքին մղումները հանգիստ չեն տար անոր: Եթէ հետեւիք իր կենսքի կշռոյթին, պիտի նշմարենք, որ ան ոչ միայն արարչական հեշտանքի «անբարարարուածութեն» կը տառապի, այլ նաեւ ի վերուստ գեղագիտական յարատեւ որոնումներու «դատապարտուած» կը թուի ըլլալ: Ընթարտութիւնը այն է, որ այս արուեստագետը ո՛չ կը գոհանայ իրերայաջորդ նուաճումներով մը ո՛չ ալ կը շահայ միջազգային գնահատումներէն, ընդհակառակը, այսպիսով, ան ինքզինք ստեղծագործական նոր յանձնարարութիւններու տակ կը դնէ: Կարենալ յայտնաբերելու եւ դրսեւորելու համար իր եութեան մէջ անթելուած ոգեղէն գանձեր, ան ժամանակի ընթացքին աւելի ու աւելի կը միարժուի իր ենթագիտակիցի հոգեմտաւոր ծալքերէն ներս ու կը շարունակէ իր բեղմնաւոր ուսումնասիրութիւնները: Հասնելայի է, որ այս բոլորը գերագոյն ճիգ, լարուած ու յարատեւ աշխատանք կ'ենթարկեն: Այնուամենայնիւ, Եւրոպի ոչ մի ստեղծագործիչներէն ներքին կրակը կը պակսի, ո՛չ հզօր երեակայութիւնը եւ ո՛չ ալ աշխատասիրութիւնը:



Եւրոպի իր ստեղծագործութեան հետ

ակնդիրներու՝ ըլլալ տեսողական թէ զգացական ոլորտներու միջեւ: Այսպիսով, արուեստի գործը չի մնար լոկ իբրեւ քանդակ արուեստասերներու համար, այլ իբրեւ անբաժանելի մաս՝ կ'ընդունուի անոնց եութեան այնպէս, ինչպէս բարձրորակ ճարտարապետական կառոյց մը՝ իր միջավայրին: Այս նախագիծ-իրագործման համար մղուած եօթը տարուան տարբեր բնոյթի որոնումները ներշնչեցին զիս, որպէսզի կարողանամ շարունակել ու բացայայտել ուրոյն (գեղագիտական) ուժը իւրաքանչիւր արտայայտչամիջոցի եւ նուաճուած յղացքի: Այսպիսով, իմ կենսքի «պոմը» կը թեւակոխէ դէպի (ստեղծագործական) նոր տարածականութիւն:

Երրորդը, որ շատ աւելի մեծ միջազգային նշանակութիւն եւ տարողութիւն ունի, անցնող յուլիսի 16-ին գետեղուեցաւ Չինաստանի Կանժու նահանգի Մինկուի քաղաքին անշրդի բացատի տարածքին: Սակայն՝ ինչո՞ւ յատկապէս Կանժու նահանգին մէջ: Այս հարցը իր տրամաբանական եւ համոզիչ բացատրութիւնը ունի: Անցնող տարիներուն բնակչիմայական փոփոխութիւններու պատճառով Կանժու նահանգը կը զրկուի ջուրէ եւ, հետեւաբար, նաեւ բուսականութենէ: Նահանգը մարդաթափումէ փրկելու եւ տարածաշրջանը շահաւետ դարձնելու համար պետութիւնը նախ կ'որոշէ ջրամատակարարման արհեստական ցանցեր կառուցել ու ապա՝ յորինումներու եւ կրթողներու բացօթեայ թանգարան մը



Չորոյ

Հոս պիտի չանդադանանք անոր անցեալի այն նուաճումներուն, որոնք արդէն իսկ ծանօթ են մեր ընթերցողներուն: Այս պարագային առիթները երբեք են. - Առաջինը՝ անցեալ տարուան նոյեմբերին, Եւրոպի մէկ գլուխ գործոցը՝ «Ծառերու պարը» մնայուն ցուցադրութեան արժանացաւ ամերիկեան «Coral Springs Museum of Art» ժամանակակից արուեստի թանգարանին կողմէ: Իւղաներկով կտաւի վրայ երկինքագրուած այս մեծողի գործը՝ «Ծառերու պարը» կը պատկանի «Symbiosis» շարքին: **Սիմպիոսիս** ինչ յունարէնով բառացիօրէն կը նշանակէ «համակենսութիւն»: Եւրոպ կ'ակնարկէ մարդու եւ բնութեան համատեղ համերաշխ գոյակցութեան: Փաստօրէն մարդն ու բնութիւնը ստեղծուած են զիրար ամբողջացնելու եւ իրարու գոյատեւումը ապահովելու համար, սակայն այսօր գաղտնիք մը չէ, որ բնութիւնը անխնայ կերպով կը փծացուի մարդուն կողմէ եւ մեծագոյն տուժող ու գոհը նոյն ինքն մարդկութիւնն է: Հոս արուեստագետը հանդէս կու գայ իբրեւ բնութեան եւ կենսքի պաշտպան: Այս առիթով թանգարանին տնօրէնը՝ Ճուլիա Էստրիկը կ'ըսէ. «Ամրո «Ծառերու պարը» գեղեցիկ ստեղծագործութիւնը կը դրսեւորէ խոր ոգեղինականութիւն եւ կարեկցանք՝ հանդէպ բնութեան: Մենք հպարտ ենք ու պատիւ ունինք Եւրոպի երկինքագիրը ներառելու «Coral Springs Museum of Art» թանգարանին մնայուն հաւաքածոյին մէջ»: Ի դէպ, բարձր հեղինակութիւն վայելող այս թանգարանը, իր լաւագոյն տասնեակին մէջ, Տէյլ Չիուլիի եւ Թուլուզ Լորթեքի շարքին, կը յիշէ նաեւ Եւրոպի անունը:



Ծառերու պարը

- Երկրորդը «Հիյաթթ» իւրաւանցային ցանցի պատկերն էր: Շնորհիւ Եւրոպի ներկայացուցած յղացքի, սերտուած ու մարդկայնական բովանդակութեան եւ մանաւա՛նդ գեղարուեստական ինքնատիպ լուծումներուն՝ բազմաթիւ թեկնածուներէն նախապատուութիւնը կը տրուի իրեն: Ստեղծագործական երկարատեւ երկունքէ մը ետք, ի վերջոյ «Չորոյ» խորագրուած այս գլուխ գործից պաշտօնական բացումը տեղի ունեցաւ անցնող տարուան նոյեմբերի 16-ին, Կլենտելի մէջ պետական մակարդակով: Իրականութեան մէջ ասիկա բարդ եւ բովանդակալից յորինում (installation) մըն է, ձօնուած՝ մարդ էակի եւ միջավայրի փոխարարութեան թեմային: Պողպատակերտ գլխաւոր կրթողը, որ խօսակցութեան բռնուած երկու վերացարկուած դէմքեր կը ներկայացնէ, գետեղուած է Մենթորը եւ Ուլիսէս պողոտաներու խաչմերուկին՝ նորակերտ «Հիյաթթ» իւրաւանցին անկիւնը, որուն ճակոտնապատը քանդակագործուած է ներսէն թէ դուրսէն՝ իբրեւ շարունակութիւն մուտքին սկսած «Չորոյ»-ին: Եւրոպ այս առիթով հետեւեալ բացատրութիւնը կու տայ. «Չորս ունիմ, որ իմ յղացքը կրկնապէս ոգեւորող կապ մը ստեղծել



Փոխարարութիւն

ստեղծել, որպէսզի քաջալերեն նաեւ զբօսաշրջային մշակոյթը: Բազմակողմանիօրէն շահաւետ այս մրցումին կը մասնակցին 2700 կերպարուեստագետներ՝ ամբողջ աշխարհէն: Մասնագետներու կողմէ նախ կ'ընտրուին յիսուն գործեր, որոնք կը վստահուին յատուկ դատական կազմի մը վերջնական վճիռին: Համակողմանի քննարկումներէ եւ վերլուծումներէ ետք կ'որոշուի տասը յղացքներ միայն գետեղել խնդրոյ առաքելալ տարածքին վրայ: Այսպիսով, Եւրոպի «Փոխարարութեան» (communication) յօրինումը կը մտնէ աշխարհի լաւագոյն տասնեակին մէջ: Պողպատակերտ եւ ուր մեթօր բարձրութիւն ունեցող այս յղացքը կը ներկայացնէ չորցած, բայց բողբելու եւ վերակենդանանալու ընդունակ ծառ մը, որուն երկու կողմերը գետեղուած են կանացի եւ տղամարդու գլուխներ, որոնք մէկ կողմէ հողէն բուսած կը թափն ըլլալ եւ միւս կողմէ՝ հայեացքնին ուղղած են դէպի վեր եւ կը սպասեն, որ անձրեւ գայ, «Ծառը» ծի ու ծաղկի եւ միջավայրը վերակենդանանայ:

Այս մէկը Եւրոպի կրթողներէ երկրորդն է, որ կը գետեղուի Չինաստանի մէջ: Առաջինը՝ 2016-ին, անոր մէկ այլ գլուխ գործոցը՝ «Յաւերժութիւն»-ը, այս անգամ

իրենց հրաւերով եւ պատմերով, դարձեալ՝ պողպատակերտ եւ չորս մեթօր բարձրութեամբ, գետեղուեցաւ Շուանկզիի GINO զբօսայգիի բացօթեայ թանգարանին մէջ:

Ի դէպ, վերջին տասնամեակին Ճայրագոյն Արեւելքի երկիրներու իշխանութիւններուն կողմէ յատուկ հետաքրքրութիւն եւ աշխուժութիւն կը ցուցաբերուի կերպարուեստի հանդէպ, յատկապէս՝ միջազգային ցուցահանդէսներու ծիրի վրայ: Թէ՛ արուեստի ուսուցումը կը քաջալերուի, թէ՛ նոր կերպարներ ու թանգարաններ կը հիմնուին, եւ թէ՛ արուեստի գործերու հաւաքողները կը բազմանան: Այսպիսով, իրենց մշակոյթը կը հարստանայ արեւմտեան գեղարուեստական լեզուամտածողութեամբ եւ:

Ճայրագոյն Արեւելքի մէջ Եւրոպի արձանագրած յաջողութիւններն ու նուաճումները պատահական չեն կրկար ըլլալ: Անոնք կ'որոնեն ու կը գնահատեն միայն արժէք ներկայացնող եւ իւրայատուկ ու բարձրորակ արուեստ միայն: Անցնող իրերայաջորդ չորս տարիներուն ընթացքին «Նուազ Արք» ցուցասրահին կողմէ Եւրոպի արուեստը ներկայացուեցաւ Սինկափուրի «Art Stage» միջազգային ցուցահանդէսին՝ միշտ արժանանալով ջերմ ընդունելութեան եւ բարձր գնահատանքներու: Ինչպէս ի յայտ կու գայ իր ստեղծագործութիւններու վերլուծումներէն, անոր արուեստը արտայայտչաձեւերով հարուստ է եւ բազմակողմանի, իսկ բովանդակութեամբ՝ խորապէս մարդկային եւ իմաստալից:

ՍՊԱՍԵ ՏԻՐԱՆ


ՀԱՅԱՍՏԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԻՐԸ ԿԸ ԶԲԱՐՑՆԵ ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵՍԻՆ ՎՐԱՅ. KCW Today-ի ԱՆԴՐԱԴԱՐԶԸ

Պատմական գեղեցկութիւն եւ կարեւորութիւն ու հնագոյն մշակոյթ ունեցող Հայաստանը մեր օրերու համաշխարհային քարտէսին վրայ կը գրաւէ ռազմավարական դիրքը:

Այս մասին, ըստ «Արմենիա»-ին, կը գրէ բրիտանական յայտնի «Kensington, Chelsea & Westminster Today» ամսագիրը, որուն օգոստոսի թիւը լոյս տեսաւ հայոց թընագիր այլութեան նկարը պատկերող շապիկով: Ամսագիրը մեծածաւալ յօդածներ նուիրած է Հայաստանին՝ անդրադառնալով մեր երկրի պատմութեան, հաւատքին, զբօսաշրջութեան ու մշակոյթին:

Յօդուածներուն հեղինակները այս տարուան յունիսին այցելած էին Հայաստան՝ մասնակցելու առաջին անգամ մեր երկրին մէջ կազմակերպուած «Մտքերու հայկական գագաթնաժողով»-ին, որ կազմակերպուած էր Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանի հովանիին տակ:

«Ծառայել Հայաստանին» կը նշանակէ ծառայել մեր քաղաքակրթութեան». 1895-ին, Օսմանեան կայսրութեան մէջ հայերու դէմ իրականացուող բռնութիւններուն դէմ հանդէս եկած Արիստիտի վարչապետ Ռիլիքըմ Կլետտիսի այս խօսքերով ալ հեղինակները կը սկսին Հայաստանին նուիրուած յօդածաշարը՝ նշելով, որ մեքեթրուած խօսքերը այսօր ալ կը շարունակեն մեծ իմաստ ունենալ, որովհետեւ Հայաստան կը շարունակէ իր նշանակալի նպաստը բերել գաւազան ոլորտներու մէջ, ինչպէս՝ համաշխարհային գիտութիւն, դասական երաժշ-



ծը՝ վախճալով դիւանագիտական հարց ունենալէ թուրքոյի հետ», կը նշեն հեղինակները՝ պատմելով նաեւ Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի դերին մասին, որ կը կատարէ Ցեղասպանութեան մասին իրազեկման մակարդակի բարձրացման ուղղութեամբ: «Դիմանալով ժամանակի փորձութեան» Հայաստան այսօր կը ծաղկի նոր թափ հաւաքող զբօսաշրջութեան եւ ծառայութիւն-



տութիւն, ճատրակ եւ այլն: «Հայ ժողովուրդը յայտնի է իր տեսակով, որ միշտ գրկաբաց կ'ընդունի այցելուները եւ դրացիները», կը նշեն հեղինակները:

Անդրադառնալով հայոց պատմութեան՝ KCW Today-ը կը նշէ, որ Հայաստան առաջինն էր, որ 301 թուականին ընդունեց քրիստոնէութիւնը՝ իբրեւ պետական կրօն: «Ունենալով նման հարուստ կրօնական եւ մշակութային պատմութիւն՝ պատահական չէ, որ ամբողջ աշխարհի հայերը այսօր ալ կը շարունակեն քրիստոնեական աստուծոյնը եւ ամուր կը պահեն իրենց հաւատքը», կը նշէ ամսագիրը:

Հեղինակները յատկապէս կ'անդրադառնան Հայոց ցեղասպանութեան՝ նշելով, որ 1915-1922 թուականներուն շուրջ 1.5 միլիոն հայեր Օսմանեան կայսրութեան մէջ կոտորածի ենթարկուեցան իշխանութիւններուն կողմէ: «Այդուհանդերձ, քաղաքական ճշմարտութիւն պատճառով, այս սարսափելի ոճրագործութիւնը երբեք արդար ճանաչում չէ գտած միջազգային հանրութեան կողմէ: Թրքական կառավարութիւնը միշտ իրաժարած է պատասխանատուութիւն ստանձնելէ կատարուածին համար, Միացեալ Նահանգները եւ Մեծն Արիստիտիսն եւս դեռ պաշտօնական չեն ընդունած կատարուա-

նութիւն, ճատրակ եւ այլն: «Հայ ժողովուրդը յայտնի է իր տեսակով, որ միշտ գրկաբաց կ'ընդունի այցելուները եւ դրացիները», կը նշեն հեղինակները:

ՈՒՐՈՒԿՈՒԷՅԻ ՄԵՋ 20 ՀԱՉԱՐ ՀԱՅ Կ'ԱՊՐԻ



Սփիւռքի գործերու գլխավոր յանձնակատար Չարեհ Սինանեանը ընդունեց Ուրուկուեյի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Ռոտուֆօ Նին Նովոյանը:

Չարեհ Սինանեանը նախ ներկայացուց սփիւռքի գործերու գլխավոր յանձնակատարի գրասենեակի գործունեութիւնը եւ, Հայաստան-սփիւռք յարաբերութիւններուն առումով, տարուող աշխատանքները: «Սփիւռքը լուրջ դերակատարութիւն ունի հայրենիքի կեանքի մէջ, եւ պետութիւնն ալ իր հերթին մեծ կարենորութիւն կու տայ հայկական սփիւռքի հետ յարաբերութիւններու ամրապնդման: Ուրուկուեյի մէջ եւս կ'ապրին մեծաթիւ հայեր, եւ մեր պետութիւններուն միջեւ առկայ են բարեկամական կապեր: Ուրուկուեյը մնայուն կերպով Հայաստանի եւ հայ ժողովուրդի կողքին է, որուն համար շնորհակալ եմ», նշեց Սինանեանը:

Նախարար Ռոտուֆօ Նին Նովոյան ընդգծեց հայերուն դերակատարութիւնը Ուրուկուեյի մէջ եւ նշեց, որ, իրենց տուեալներով, այժմ 20 հազար հայ կ'ապրի ին: «Հայութիւնը Ուրուկուեյի մէջ կը նպաստէ հասարակութեան զարգացման, կը պահպանէ իր ինքնութիւնը, ասորը վառ վկայութիւնն է հայկական դպրոցներու ու եկեղեցիներու առկայութիւնը: Հետաքրքրական համակեցութիւն է՝ ըլլալ Ուրուկուեյի քաղաքացի եւ մնալ հայ, պահպանել ինքնութիւնը», ըսաւ ան՝ յիշելով անունները այն նշանաւոր հայերուն, որոնք իրենց ներդրումը ունեցած են Ուրուկուեյի մէջ:

Ուրուկուեյը համեմատաբար փոքրաթիւ սփիւռք ունի՝ մօտ կէս միլիոն: Նախարարը յատկապէս հետաքրքրուեցաւ Հայաստանի փորձառութեամբ՝ սփիւռքի հետ աշխատելու առումով, ինչ որ կրնայ մեծապէս օգտակար ըլլալ Ուրուկուեյին: Ռոտուֆօ Նին Նովոյան դիտել տուաւ, որ այս ոլորտին մէջ համագործակցութեան խորացման պիտի նպաստէ նաեւ Հայաստանի մէջ Ուրուկուեյի հիւպատոսութեան բացումը:

Չարեհ Սինանեանը շեշտեց, որ սփիւռքի գործերու գլխավոր յանձնակատարին գրասենեակը բաց է սերտ համագործակցութեան եւ փորձառութեան փոխանակման համար:

Այնուհետեւ կողմերը անդրադարձան հայկական սփիւռքի աշխարհագրական տարածուածութեան եւ բազմազանութեան, հայրենադարձութեան կարելիութիւններուն, Հայաստան-Ուրուկուեյ տնտեսական յարաբերութիւններու զարգացման մէջ հայ համայնքին ներգրաւման:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՄԱՆԴԸ 51 ՏՈԿՈՍՈՎ ԱՒԵԼՅԱԾ Է

Հայաստանի մէջ վարկերու եւ աւանդներու ծաւալները 2019-ի յունիսի վերջին, նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանին հետ բաղդատելով՝ եականօրէն աւելցած են:

Հայաստանի Կեդրոնական դրամատունը հրապարակեց 2019 թուականի յունիսի դրութեամբ հայաստանեան առեւտրային դրամատուներուն կողմէ տրամադրուած վարկերու եւ դրամատուներուն մէջ ներդրուած անաղիւններուն ցուցանիշները:

Շար.ը՝ էջ 8

ՅՈՒԼԻՍ 2019-ԻՆ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՈՒՄՆ ՅՈՒԼԻՍԵՆ 16,7 ՏՈԿՈՍՈՎ ԱՒԵԼԻ ՄԱՐԴ ԵԿԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆ

Ընթացիկ տարուան յուլիսին Հայաստանի օդակայաններուն մէջ ընդհանուր ուղեւորահոսքը կազմեց 371.883 մարդ՝ 2018 թուականի նոյն ամսուան ցուցանիշը գերազանցելով 16,7 տոկոսով:

«Արմենիա» միջազգային օդակայանէն յայտնեցին, որ 2019-ի յուլիսին, 2018-ի նոյն ժամանակաշրջանին հետ բաղդատելով, «Չուարթընց»-ի մէջ, ուղեւորահոսքը աւելցաւ 18,7 տոկոսով: Եթէ 2018-ի յուլիսին օդակայանի ծախայուկներէն ետք 2018-ի 300.674 ուղեւոր, ապա 2019-ի յուլիսին՝ 356.934 ճամբորդ:

Շար.ը՝ էջ 8

6 ԱՄՍՈՒՄԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ՋՈՒՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿԱԿԻ ԱՒԵԼՅԱԾ Է

2019 թուականի յունուար-յուլիս ամիսներուն, 2018 թուականի նոյն ժամանակաշրջանին հետ բաղդատելով, երկակի աւելցած է ոգելից ըմպելիներու արտադրութիւնը: Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներուն համաձայն, ըսնեացի արտադրութիւնը, հաշուետու ժամանակաշրջանին, աւելցած է 44 տոկոսով, ուլիսինը՝ 15 տոկոսով, օգիկը՝ 37 տոկոսով, գիկինը՝ 43 տոկոսով, գարնշուրիկը՝ 19,6 տոկոսով:

Ընթացիկ տարուան առաջին կիսամեակին աւելցած է նաեւ հանքային եւ կազային ջուրերու արտադրութիւնը՝ 23 տոկոսով:

ՇՈՂԻԿ ԹՈՐՈՍՄԵԱՆԻՆ ՄԵՆԱՀԱՄԵՐԳԸ ՇՈՒՇԻԻ ՄԵՋ

Օգոստոս 13-ին Շուշիի Կերպարուեստի պետական թանգարանին մէջ տեղի ունեցած է լիբանանահայ երգչուհի Շողիկ Թորոսեանին մենահամերգը (գեղ. դէկ. Չաքար Բեշիշեան)՝ դաշնակահար Նելլի Սարգսեանի նուագակցութեամբ եւ Շուշիի «Վարանդա» երիտասարդական երգչախումբի մասնակցութեամբ:

Համերգին ներկայ էին՝ Ազգային ժողովի փոխնախագահ Վահրամ Բալայեանը, մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ զբոսաշրջութեան նախարարութեան նախարար Լեռնիկ Յովհաննիսեանը, քաղաքապետ Արծուիկ Սարգսեանը, մտաւորականներ, բարձրաստիճան գինուորականներ, հիւրեր:

Համերգին ընթացքին հնչած է հայկական դասական երաժշտութիւն: Հանդիսատեսը մեծ բաւականութեամբ վայելած է կոմիտասեան երգեր:

«Վարանդա» երգչախումբին մասնակցութեամբ հնչած է «Թալիշի դիրքերում» երգը, որուն խօսքի հեղինակն է Միքայէլ Հաջեանը: Երգը նուիրուած է ապրիլեան պատերազմի հերոսներուն:

Լեռնիկ Յովհաննիսեանը նշած է, որ հանդիսատեսը բոլոր ծափողոյններով իր հիացմունքը յայտնած է երգչուհիին:

«Ասիկա մեր համագործակցութեան սկիզբը կարելի է համարել: Ես համոզուած եմ, որ երգչուհիին յաջող համերգը արցախեան երաժշտութիւնը հասարակութեան մեծ լսարան ունեւալու է», անեցունցած է նախարարը:

Շողիկ Թորոսեանի խօսքով, իրականացած է Արցախի մէջ մենահամերգով հանդէս գալու իր նուիրական երազանքը:

«Մեծ ուրախութիւն է երգել հերոսական Արցախի մէջ եւ վայելել արցախեան հանդիսատեսին ջերմ ընդունելութիւնը: Ես զգացած եմ մեզ՝ Արցախի ու սփիւռքը կամրջող ամուր կապը», եզրափակած է ան:



ԿԱՅԱՅԱՒ ԳԱՐՄԵՆ ԱՃԵՄԵԱՆԻՆ ՄԵՆԱՀԱՄԵՐԳԸ ԳԻՄՐԻԻ ՄԵՋ

Օգոստոս 9-ին Գիւմրիի Յովհաննէս Շիրազի յուշատուն-թանգարանի բակին մէջ տեղի ունեցաւ ժողովրդական եւ աշուղական երգերու լիբանանահայ կատարող Գարմեն Աճեմեանի «ԲԵՉ ԵՄ ԵՐԳՈՒՄ, ԻՄ ԳԻՄՐԻ» խորագիրով մենահամերգը:

Գարմեն Աճեմեանը առաջին անգամ հանդէս եկաւ Գիւմրիի մէջ: Ձեռնարկը երգչուհիին նուրբ եր իր կողմէ շատ սիրելի Գիւմրի քաղաքին: Հնչեցին Շերամի, Հա-



լասիի, Յովհաննէս Շիրազի, Աւետիք Իսահակեանի ստեղծագործութիւններէն:

Ձեռնարկին Գարմեն Աճեմեանին հետ միասին մասնակցեցան նաեւ Գիւմրիի Շերամի անուան թիւ 5 երաժշտական դպրոցի սաները:

Յովհաննէս Շիրազի յուշատուն-թանգարանի տնօրէն Արա Պապեանեանը շնորհաւորեց երգչուհիին շքեղ ելոյթի եւ ծննդեան օրուան առիթով՝ յոյս յայտնելով, որ Գարմեն Աճեմեանը այսուհետեւ ամէն տարի անգամ մը ելոյթ կ'ունենայ արհեստներու ու արուեստներու քաղաք Գիւմրիի մէջ:

Համերգային երեկոյին ներկայ էր նաեւ

Գիւմրիի քաղաքապետի խորհրդական, մշակոյթի գործիչ Յասմին Կիրակոսեանը, որ Գիւմրիի քաղաքապետարանի անունով ողջունեց Գարմեն Աճեմեանը՝ փաստելով, որ Գարմեն Աճեմեանը արժանանալով Գիւմրիի խստապահանջ հանդիսատեսի բարձր գնահատականին՝ այսուհետեւ վստահաբար համարձակօրէն կարող է ելոյթ ունենալ Հայաստանի որեւէ քաղաքի մէջ:

Երգչուհին ալ, իր հերթին, շնորհակալութիւն յայտնեց գիւմրեցիներուն ընդունելութեան ու գնահատանքի համար՝ խոստանալով պարբերաբար համերգներով ներկայանալ Հայաստանի գեղեցկագոյն քաղաք Գիւմրիի մէջ:

ՄԵԾԱՄՕՐԻ ՄԵՋ ՅՈՒՇԱՐՁԱՆ՝ ԱՊՐԻԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՋՈՀՈՒԱԾՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Արմաւիր մարզի Մեծամոր քաղաքին մէջ 12 օգոստոսին բացումը կատարուեցաւ ապրիլեան պատերազմին զոհուած Սաշա Գալստեանին եւ միւս գինուորներուն նուիրուած յուշարձան՝ Սաշա Գալստեանի ծննդեան օրը, երբ ան պիտի դառնար 23 տարեկան:

Ներկայ էին՝ զոհուած գինուորներուն հարազատները, Հայաստանի պաշտպանութեան փոխնախարար Գաբրիէլ Բալայեանը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին կից՝ Աննա Յակոբեանը:

Յուշարձանի հեղինակ Աթուր Բաղդասարեանը լրագրողներուն հետ ունեցած զրոյցին ընթացքին ըսաւ, որ յուշարձանը նախագծած է՝ նկատի ունենալով յաւիտենական խորհուրդը, հայրենասիրութեան գաղափարը:

«Սաշայի ծնողներուն ու մեր կողմէ նախաձեռնուեցաւ ստեղծել յուշարձան մը, որ պիտի միաւորէ մեր ժողովուրդն ու մեր հերոսները: Ասիկա միասնականութեան նպատակ կը հետապնդէ, որպէսզի այս յիշողութիւնը կենդանի մնայ ու երիտասարդներուն կենացը հետագայ սերունդներուն համար օրինակ դառնայ», յայտնեց Բաղդասարեանը՝ նշելով, որ միայն քանի մը ամսուան ընթացքին նախագծած է յուշարձանը:

Անոր համաձայն, յուշարձանին հիմքը հայրենիքն է, իսկ երկու սիւներն ալ կը խորհրդանշեն ժողովուրդը, որ երկու ձեռքերով խաչ մը կը բռնէ՝ իբրեւ յաւերժութեան նշան: Ապրիլեան պատերազմին զոհուած թուր գինուորներուն անունները գրուած են յուշարձանի յենասիւներուն վրայ:

Սաշա Գալստեանին հայրը՝ Վաչագան Գալստեանը, որուն մտայնացումն էր նման յուշարձան կանգնեցնելը, նշեց, թէ ճիշդ է, որ յուշարձանը իրենց տան առջէն կանգնած է, սակայն անիկա ապրիլեան քառօրեային զոհուածներուն յիշատակը կը յանգեցնէ: «Սաշայի ֆիզիքապէս կենդանութեան օրօք ես մէկ տղայ ունեի, իսկ անոր ու տղոց գոհուելէն ետք բոլորն ալ իմն են: Սաշան առանձինն չէ կատարած իր գործը, եւ ես չեի կրնար ընել բան մը, ուր իր եղբայրներուն անունները չըլլային: Միակ բանը, որ պէտք է ընեմ միայն իրեն համար, իր շիրմաքարն է: Այսօր Սաշան իմ տղաս չէ, ազգին տղան է, ու նոյն ձեռով, մնացած տղաները իմն են», ըսաւ Վաչագան Սարգսեանը՝ աւելցնելով, որ ինք մէկ որդի ուուաւ ազգին՝ փոխարէնը ունենալով 106 տղաներ:

Չոհուած Նորայր Գալստեանին մայրը՝ Նունէ Աթաջանեանը, լրագրողներուն հետ ունեցած զրոյցին ընթացքին նշեց, որ շնորհակալ է Սաշա Գալստեանի ընտանիքին, որ յուշարձանի միջոցով, Սաշայի գլխավորութեամբ, կը յանգեցնէ 107 տղոց յիշատակը:

Սաշային մայրը ըսաւ, որ երկու տարիէ տխրութեամբ կը նշէին իր որդիին տարեդարձը, սակայն ասկէ ետք տարբեր պիտի ըլլայ. «Ես Սաշին խօսք տուած եմ, որ այսուհետեւ իր ծնունդները ուրախութեամբ պիտի դիմաւորեմ, որովհետեւ ինք մեզի հետ է», յայտնեց ան:

Յուշարձանը կենացի կոչուած է Սաշային հօր, անոր ընկերներուն ու Գալստեաններու ընտանիքի բարեկամ հորէն Զորանջեանին աջակցութեամբ:

ՀԱՍՏ ՍԱՀԵԱՆԻ ԳԻՐԸ ԼՈՒՍԱՒՈՐԵԼՈՒ ԱԾԽԱՏԱՆՔ ԿԸ ՏԱՐՈՒԻ



Սիւնիքի մարզի Լոր գիւղը, որ Համո Սահեանի ծննդավայրն է, կ'ակնկալէ, որ իր տեղը ունենայ զբօսաշրջային քարտէսին վրայ, մանաւանդ որ անիկա ունի մշակութային հարուստ պատմութիւն: Բայց եւ այնպէս գիւղը ունի նաեւ զանազան հարցեր, որոնց կարգին է գիւղի արտաքին լուսաւորութեան խնդիրը, որուն լուծման կ'օժանդակէ «ՎիվաՍտե-Էմ. Թի. Սի.» ընկերութիւնն ու Վայրի բնութեան ու մշակութային արժեքներու պահպանման հիմնադրամը (FPWC):

Լուսաւորութեան սիւներու տեղադրման աշխատանքները արդէն սկսած են, կը նախատեսուի տնտեսական ու բնապահպանական արդիւնաւետութիւն ապահովող «Լետ» համակարգով լուսաւորել գիւղին մէկ հատուածը եւ տեղադրել 32 լուսարձակ: Աշխատանքային քարտէսին վրայ ընդգրկուած է նաեւ անուանի բանաստեղծին տուն-թանգարանի տարածքը:

Գիւղի վարչական ղեկավար Դաւիթ Առուստամեանը շատ կարեւոր նկատեց այս նախաձեռնութիւնը՝ համափուլացնելու անվտանգութեան, զբօսաշրջութեան խրախուսման եւ յատկապէս բնակիչներուն ապրուստի բնական պայմաններ ստեղծելու առումով: Անոր համաձայն, գիւղին մէջ լուսաւորման բացակայութիւնը բազմաթիւ վտանգաւոր հարցերու պատճառ կը դառնայ:

Շար.ը՝ էջ 8

Պատրաստեց՝ ՄԱՐԻՆԱ ՀԱՄԱՄԵՆԱՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

ՀԱՅՐԻԿ ԱՔՍՈՐԱԿԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՒԲԵԱՆՑ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Երուսաղէմ ուխտի երթալու անուան տակ սուլթան Յամիտի կողմէ աքսորի դատապարտուած Խրիմեան Յայրիկ 1890-ի դէկտեմբերի վերջաւորութեան ճամբայ ելաւ։

Պոլիսէն, Բարնաթեան խանէն ճամբայ ելելու վերջին առաւօտն էր։ Դնւնոդ վարդապետ Փիրդալմէտեան եւ Վրթանէս Ախիկեան, որոնք Յայրիկի հետ Երուսաղէմ պիտի մեկնէին, անոր սենեակը մտան ճամբու պատրաստութիւններ տեսնելու համար։ Խորէն պատրիարքն ալ, ի պատիւ Յայրիկի, բարապան մը դրկեց անոր ծառայելու։

Ամբողջ օրը պոլսեցիներ եւ գաւառացիներ այցելեցին Յայրիկի, բարի ճանապարհ մաղթեցին, աջը համբուրեցին ու հեռացան։ Յետմիջօրէին այցելեց Գարեգին եպիսկոպոս Սրուանծտեանց։ Իր սիրեցեալ ու հաւատարիմ աշակերտը տեսնելով Յայրիկ փոճկեցաւ։ Ուսուցիչ ու աշակերտ ողջագուրուեցան եւ քանի մը վայրկեան հեծկտացին։

Քիչ ետք Ներս մտաւ Մատթօս եպիսկոպոս Իզմիրլեան։ Յայրիկ անկէ խնդրեց որ միասին պատրիարքարան երթան հրաժեշտ առնելու, բայց Մատթօս եպիսկոպոս ըսաւ։

- «Ես պատրիարքարան չեմ ուզեր երթալ, բայց հոս երկար կը սպասեմ ձեզի։ Շատո՞նց ի վեր է որ հրաման ստացաք Երուսաղէմ ուխտի երթալու։

Յայրիկ պատասխանեց.
- Երկու ամիս է ի վեր է. ես նոյնքերին պիտի մեկնէի, բայց երկու կրակի եւ անելի մէջ իյնալով ուշացաւ։ Մէկ կողմէն սուլթանը կը ստիպէ որ հեռանամ, պատրիարքարանն ու իւրայինները կը համոզեն, կը խնդրեն որ անպայման երթամ, առարկելով որ եթէ չերթամ ազգին իրաւունքները պիտի խլեն։ Միւս կողմէ յեղափոխականները կը պնդեն ու կը պահանջեն որ չերթամ, մնամ, ընդդիմանամ եւ գաղտնի երթամ Եւրոպա։ Բայց ես շատ լաւ գիտեմ որ եթէ չերթամ, քաղաքական ինչ դէպք եւ բնական ինչ աղետ՝ երաշտ, սով, հեղեղ, երկրաշարժ, որ տեղի ունենան, պիտի պոռան, կանչեն թէ՛ Խրիմեանի չերթալու պատճառով այսքան չարիք ու պատուհաս տեսանք։ Անցեալ շաբթու Ունճեան Էփեսոսի Դալաթիոյ կամուրջին վրայ ճամբաս կորեց եւ ինձ տարաւ Եւայեանց գրասենեակը, ուր հաւաքուած ազգայինները յայտնեցին թէ մեծ եպարքոսը կը ցանկայ տեսակցութիւն մ'ունենալ ինձ հետ։ Ելանք գացիքք եպարքոսի մօտ. սիրով ընդունեց եւ ըսաւ, որ սուլթանն ինձ շատ կը յարգէ եղեր իբրեւ Նախկին պատրիարքի եւ չ'ուզեր որեւէ անախորժութիւն պատճառէ ինձ եւ կը ցալկայ որ ես իմ կամքով Երուսաղէմ ուխտի երթամ, ծախսերս ալ պալատը կը հոգայ։ Շա՛տ լաւ, պատասխանեցի. Վանէն գիս հոս աքսորի քաշքշեցիք. ի՞նչ էր մեղքս, ի՞նչ յանցանք գործեր էի, հիմա ալ կ'ուզեք, որ Երուսաղէմ երթամ. այսինքն աքսորս կրկնակի կը դարձնեք։ Եպարքոսը շատ խնդրեց, պնդեց որ չմերժեմ, ես ալ ըսի շատ լաւ կ'երթամ, միայն կը խնդրեմ, որ խոստանաք արտօնութիւն տալ ինձ, քանի մը տարի յետոյ Վան վերադառնալ եւ վերջին օրերս Վարազայ վանքին մէջ անցունել։ Եպարքոսը խոստացաւ եւ ըսաւ, որ պիտի կատարէ փափաքս։ Գիտեմ, որ չպիտի կատարուի փափաքս, բայց, Է՛հ, բան մըն էր ըսի։ Ա՛խ սրբազայն եղբայր, վիշտս շա՛տ մեծ է. վանեցիք թողին, որ Չատիկը հայրենիքիս մէջ տօնէի. այժմ ալ պոլսեցիք չթողին, որ Նոր տարին եւ Սուրբ Շննդեան տօները Պոլսոյ մէջ տօնեն։

Քիչ ետք Աբիկ Ունճեան սեղանաւոր Գրիգոր Թերլէմէզեանի միջոցով Յայրիկի ուղարկեց սուլթան Յամիտի շնորհած 60 ոսկին։

Յայրիկ կապոցները եւ պայուսակները ուղարկեց Նաւահանգիստի մաքսատունը, իսկ ինք գնաց պատրիարքարան եւ հրաժեշտ առաւ Խորէն պատրիարքէն։

Պատրիարքարանէն վերադառնալէն ետք Յայրիկ Սրուանծտեանց եւ Իզմիրլեան սրբազաններուն հետ կառք Նստաւ եւ ճամբայ ելաւ դէպի ծովափ։ Իր ընկերակիցներ Դնւնոդ վարդապետ եւ Վրթանէս Ախիկեան, ինչպէս նաեւ բարեկամներ ու հայրենակիցներ կառքերով Յայրիկի կառքին հետեւեցան։ Ետեւէն կու գային լրտեսներու կառքերը։

Մաքսատան մօտ կառքերէն իջան։ Յայրիկ եւ ընկերակիցները Նաւակ Նստելով ուղղուեցան դէպի աստրիական Լոյտ ընկերութեան շոգենաւը, որուն մօտ ոստիկանական սպայ մը Նաւակը կանգնեցուց եւ ստուգեց մեկնողներուն անցագիրները։ Յայրիկ եւ Դնւնոդ վարդապետ տեղաւորուեցան առաջին կարգի **կուպէներու** մէջ։ Լոյտի Նաւաւորեց ի պատիւ հայոց Նախկին պատրիարքին, պարգէտ տուաւ Նաւուն դոջակը։ Ոստիկանական սպան իր հետեւորդներով հեռացաւ, պալատին եւ Բարձրագոյն դրան հաղորդելու, որ Խրիմեան իրօք շոգենաւ մտաւ Երուսաղէմ երթալու համար։

Քիչ ետք, Յայրիկի բարի ճանապարհ մաղթելու համար հասան պատրիարքի ներկայացուցիչը, Կրօնական եւ Զաղաքական ժողովներու, ինչպէս նաեւ ազգային հիմնարկութեանց ներկայացուցիչներ եւ հոծ բազմութիւն մը։

Ներկաներէն Ենովք Տէր Արիստակէսեան կը գրէ. «Եկողները բոլորն ալ Յայրիկի աջը համբուրեցին, բարի երթի խօսքեր ըսին եւ երբ շոգենաւը մեկնումի վերջին ազդանշանը սուլեց, մենք վար իջանք։ Բոլորն ալ կու լայնիք. Յայրիկն ալ կու լար. անոր վեհափառ ու գեղեցիկ դէմքը ծածկուած էր խոր վիշտով եւ թախիծով։ Երեկոյ էր. դէկտեմբերի դժգոյն արեգակի շողերն ընկած էին Վստփորի ծիփան ու



Երուսաղէմի Յայկական թաղը

կապուտակ ջուրերուն վրայ, որոնց կուրծքը պատռելով կը սուրար Լոյտի շոգենաւը, դէպի Երուսաղէմ տանելով մեծ աքսորական հայոց Յայրիկը»։

Երուսաղէմ հասնելէն ետք Յայրիկ իջեւանեցաւ հայոց Սուրբ Յակոբայ մայրավանքը։ Յարութիւն պատրիարք Վեհապետեան եւ միաբանութիւնը սառն ընդունելութիւն ցոյց տուին մեծ աքսորականին եւ իբր բնակատեղի Աբեղաթաղի գետնալարկ, Նեղիկ, ցած ու խոնաւ խուցերէն մէկը յատկացուցին։

Բարձրագոյն դուռը խիստ հրահանգ տուաւ Յարութիւն պատրիարքին եւ վանքի միաբանութեան, որպէսզի Խրիմեան Երուսաղէմէն չհեռանայ։ Պատրիարքը անձնապէս ու պաշտօնապէս կ'երաշխաւորէր եւ պետութեան մօտ պատասխանատու կը դառնար, որ Խրիմեան Երուսաղէմէն պիտի չհեռանայ։

Սուրբ Յակոբայ մայրավանքը կը գտնուի Երուսաղէմի հարաւ-արեւմտեան կողմը, Սիոն լեռան բարձունքին։ Յին Երուսաղէմի չորս թաղերէն մէկն է Յայոց թաղը։ Երուսաղէմի մէջ հայկական վանքեր ու եկեղեցիներ հիմնուած են Դ. դարէն։

Յայրիկ իրեն յատկացուած խուցին մէջ մենաւորի եւ կամաւոր բանտարկեալի կեանք կը վարէր։ Անոր կը ծառայէին վանեցի երկու երիտասարդներ՝ Վահան սարկաւազ Սահակեան (հետագային՝ Կորիւն եպիսկոպոս) եւ Վահան սարկաւազ Լազարեան (հետագային՝ Խորէն վարդապետ)։ Առտու եւ երեկոյ տաճար կ'իջներ եւ անկին մը կծկուելով լուռ ու մունջ կ'աղօթէր։ Օրուան մեծ մասը կարդալ-գրելով եւ այցելութիւններ ընդունելով կ'անցընէր։

Սեդրաք Տեկանց 1891-ի գարնան Երուսաղէմ գնաց Յայրիկը տեսնելու եւ վարդապետ ձեռնադրուելու նպատակով (սակայն չձեռնադրուեցաւ, որովհետեւ Յարութիւն պատրիարք առաջարկեց որ վանքին միաբան դառնայ եւ Երուսաղէմէն չհեռանայ)։ Ան կը գրէ.

«Սուրբ Յակոբայ եկեղեցւոյ բակին մէջ, դէպի աջ կողմը, միաբա-



Սուրբ Յակոբայ տաճարը

նութեան խուցերն տանող ճամբուն մուտքը, առաջին յարկին վրայ դռնակ մը կայ փոքրիկ ու Նեղիկ։ Եթէ քիչ մը հասակը բարձր է երկու կտոր ինչու եւ. եթէ քիչ մը հաստկեմ, քովընտի ներս մտնելու ես այդ բանտի դռնէն։ Նախասենեակը խոնաւ եւ մութ խցիկ մը, երկաթապատ փոքրիկ լուսամուտ մը ունի։ Այդ անտանելի խուցէն մի ուրիշ խուց կը մտնեմ որ հազիւ մէկ մեթր լայնութիւն եւ երեք մեթր երկայնութիւն ունի։ Պատուհանին կից կտորած սեռիկ մը եւ ժանգոտած պղնձէ աման մը՝ Յայրիկի լուսացուելու տեղն են. իսկ մնացեալ մասը անկողնիներու յատկացեալ է։ Այս Նեղ խուցի վարի կողմը դռնակ մը կայ. անկից ահա Յայրիկի սրահ մտնելու բարեբաղդութիւնը պիտի ունենամ»։

Տեկանց կը շարունակէ ըսելով. «Ուրախ եմ ըսել թէ այդ մեծ մարդու (Յայրիկի) կողովի կազմուածքը կոցեր է միջեւ ցարդ դիմաւալ արկածներով լի եօթանասուն տարիներու ծանրութեան - միայն շատ թեթեւ քիչ մը շնչարգելութիւն եւ մերթ մասնակի յօդացաւ կը Նեղին գինքն. եթէ ոչ ընդիմարապէս քաջառողջ է եւ ազգն բաղդաւորութիւն պիտի ունենայ տակաւին ընդ երկար տարիներ հայութեան պարծանք եւ մխիթարանք Խրիմեան Յայրիկն վայելելու, եթէ փութով այդ սոսկալի գնտան խուցէն, այդ վտանգաւոր կիմայէն դուրս ելնէ։ Այո՛, Յայրիկի բնակարանը սենեակ չէ այլ իրօք գնտան։ Գետնայարկ խուց մը, որոյ եւ տանիքի քերուկի հաստութիւն մեկ կանգունակ աւելի է, ճիշդ գետնափոր գետեզմանի ձեւ ունի, երկնակիկ ու Նեղ. երկու մեթր լայնութիւն եւ երեք մեթր երկայնութիւն ունեցող այս Նեղ խուցին մէջ երեւակայեցեք պարթեւահասակ Խրիմեանը համարձակ չէ կարող կանգնիլ զի գլուխ առիքին կը գարնէ... Այս տարօրինակ սենեակը պատուհան մը միայն ունի անլոյս, որ պատրիարքարանի մարմարիոնէ մուտքին վրայ կը Նայի. աջ ու ձախ կողմերն երկու փոքրիկ խալիւներով եւ բարձրով բազմոցներ կան. միոյն վրայ ինքն բազմած է, միւսին վրայ հիւրեր կ'ընդունի փոփոխակի. փոքրիկ սեղան մըն ալ կայ կանաչ կերպասով ծածկուած եւ պարզ աթոռակ, ուր կ'աշխատի Յայրիկ։ Յայրիկին մօտ պաղտաշի (ծալապատիկ) Նստած է հայր Դնւնոդ Փիրդալմէտեան, որ թեպէտ տկար, բայց իւր զուարթ բնավորութեամբ անոր անձկութիւն եւ վիշտերն կը մեղմացընէ։ Յաճախ Յայրիկի հետ կը ճաշէինք. եւ գիտե՞ք ինչ է իւր կերած. պահոց օրեր քանի մը դգալ ծաւրէ վռռշի պէս բան մը որ վանեցի վարդապետ մը կը պատրաստէ սիրով, ցամաք ոսպ կամ բակլոյ, իսկ ուտիք օրեր, միաբանաց սովորական կերակուրը որ չէր կարող ուտել. քանի մը պատռա խաշած միս եւ հաւկիթ էին իւր սիրած կերակուր, իւր սակաւապէտ սնունդը։

«Իսկ Ննջարան եւ կամ անկողին իւր Նեղ բազմոցն էր, որոյ քով սարկաւազը (Վահան Սահակեան) երկար տախտակ մ'ալ կը յաւելուր երկու աթոռներու վրայ հաստատեալ. անդ կը Ննջըր հայոց Յայրիկը... Երբեք դժգոհութիւն, բնա՛ւ տրտունջ մը չսեցի իրմէ։ Միայն օր մը ըսաւ - Արծիւն ճնճղկան վանդակի մէջ սեղմած են. այս ալ



Յարութիւն պատրիարք Վեհապետեան

կ'անցնի։ Արդեօք Երուսաղէմի այդ ընդարձակ եւ հարուստ վանքին մէջ Խրիմեանին արժանի եւ յարմար տեղ եւ կեանք պատրաստել կարելի չէ՞ր»։

Սեդրաք Տեկանց տասնվեց օր անցուց Յայրիկի հետ. ան կը շարունակէ յուշագրելով. «Օր մ'ալ Սուրբ Յովհաննու ծնունդ գացինք. խեղճ Յայրիկ, որչա՛ր կարօտ մնացեր է լեռներու օդին, ծառերու շուքին, զոգողուն աղբերաց. այդ իւր եւ մերդ բոխող Անտեաց երկիրը, Դալթի քաղաքը, Սողոմոնի տաճարը չոր ու ցամաք ծալ-ծալ քարեղէն լեռներ կը բաղկանայ. ի զուր անուակ մը, աղբերակ մը կը փնտռեն աչերդ. սոթաքկէզ արեւին տակ, սպիտակ ժայռերու ծալքերու վրայ, անշրդիկ կը հալիս ու կը պապակիս։ Վերջապէս մեր ուխտատեղին կը հասնիք ուսկից ձորակի մը մէջէն կը բարձրանաք ռուսաց վանք որ ովասիս մ'է իւր պարտեկներով։ Դովանաւոր ծառի մը տակ կը հանգչի Յայրիկ. որչա՛ր գոհ է. ծառոց տերեւներու սօսափին եւ բարձունքի հանդէպ ձորի տեսարանը հայրենի յիշատակներ կը զարթեցունեն յինքն. ամէն վայրկեանին հրատաճոր ա՛խ մը կը թռի սրտէն. Վարազայ լեռներ, Վարազայ ծառեր, Վարազայ հովեր, հազարաւոր սառիկ ու չփիկ աղբիւրներ. Կոռ քարի տակ աղբիւրը կը յիշէ անոր հովն ու հոտ ու պէս պէս ծաղկունքն անհամար։ Ի՞նչ անուշ հով կը փչէ, կ'ըսէ Յայրիկը եւ կը տարածուի հողին վրայ բաժօթայ. վերարկուս վրան կը ծածկեմ... Դո՛ւ դու, կամացո՛ւկ շարժ տերեւներն որ չի զարթեցնեն մեծ տարագիրն։ Թողէք հայրենի յիշատակաց երազներու մէջ շրջի հանգչի պահ մը։ Իսկ ես անշարժ կը հսկեմ, կը տեսնեմ անոր մրափած սիրուն դէմքը եւ կ'ըսեմ ինքնին - Եթէ հայ ազգն իւր խոր քունէն չարթննայ եւ չտեսնէ Յայրիկն եւ զայն կաթողիկոս ընտրելով այդ բանտէն չհանէ, օր մ'ալ հայոց Յայրիկը այդ կիմային, այդ գնտանին մէջ աչեր պիտի փակէ եւ այլեւս չպիտի բանայ ի դատապարտութիւն մեզ»։

Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի աշակերտներէն Մուրատ Մուրատեան, Ռշտունիքի Նոր Գեղէն, կը յիշէ. «Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի աշակերտներէն ըլլալով յաճախ առիթ կ'ունենայի Յայրիկի հետ տեսնելու եւ անոր քաղցր ու հաճե-



լի զրոյցները լսելու։ Օրն ի բուն իւր խոնաւ ու Նեղ խուցին մէջ ամփոփուած կը կարդար, կը գրէր եւ երբեմն ալ ցած ձայնով կ'երգէր։ Յարութիւն պատրիարքը յատկապէս այդ գետնայարկ ու խոնաւ խուցը յատկացուց Խրիմեանին, որպէսզի պետութիւնը չկասկածէր թէ աքսորական Յայրիկը վանքին մէջ մասնաւոր գուրգուրանքի առաքկայ դարձած է։ Անոր անձի եւ անուան շուրջ Երուսաղէմի բնիկ հայոց, ուխտաւորներու եւ միաբաններու մէջ այնքան խոր յարգանք եւ համակրանք ստեղծուած էր, որ երբ նա երբեմն վանքի շրջապատէն դուրս գալով հեռուները պտոյտի կ'երթար, հետաքրքիր բազմութիւն մը՝ հայեր, հրեաներ եւ արաբներ, կը հետեւէին իրեն։ Նա կ'առանձնանար պարտեզի մը մէջ, կը Նստէր կամ կը պառկէր վարդի թուփերուն տակ եւ դանակը ձեռքին՝ վարդենիի փայտերէն բազմաթիւ ծխամորճներ կը պատրաստէր, կը կարդար կամ շարական ու ժողովրդական երգեր կ'երգէր։ Երեկոները յաճախ իր մօտ կ'երթային իւր հայրենակից եւ Վարազայ վանքի միաբան Դնւնոդ վարդապետ Փիրդալմէտեան եւ Մխրտա վարդապետ Սկլացեան, որոնք իրենց հաճելի զրոյցներով եւ հին յուշերով Յայրիկին ուրախութիւն կը պատճառէին։ Դնւնոդ վարդապետ չունգուռի վրայ կը նուագէր ու կ'երգէր աշուղական երգեր։ Կը յիշէ թէ ինչպէս շատերը կը ցանկանային Յայրիկի խուցը մտնել եւ այդ ուրախ ժամանցին մասնակից ըլլալ, բայց տեղ չկար, շատ Նեղ էր։

Օր մըն ալ Յայրիկ իր մօտ կանչեց Մուրատ Մուրատեանը եւ ըսաւ անոր.

- Տղաս, բաւական բան սորվեցար, ալ ինչո՞ւ կը մնաս հոս. գնա՛ հայրենիք, վասնզի հոն քեզ նման երիտասարդները գեղջուկ ժողովուրդին մէջ շատ մեծ գործ կրնան կատարել մասնաւոր հիմա, երբ ազատութեան գաղափարը եւ յեղափոխութեան ձգտումը օրըստօրէ կը տարածուի ազգին մէջ։

Յայրիկի խորհուրդով ան Երկիր վերադարձաւ եւ նուիրուեցաւ գիւղացիութեան ազգային եւ յեղափոխական գործերուն։

Անգամ մըն ալ Յարութիւն պատրիարք Յայրիկը ճաշի հրաւիրեց։ Ծաշին ներկայ էին նաեւ ուխտաւորներ։ Պատրիարքը Յայրիկէն խնդրեց ազգասիրական ճառ մը խօսիլ։

Յայրիկ ոտքի ելլելով ըսաւ.

- Սրբազան եղբայր. Վանայ մէջ ազգասիրական ճառեր եւ քարոզներ խօսեցայ, գիս Պոլիս աքսորեցին։ Պոլսոյ մէջ ազգասիրական ճառեր ըսի՝ զիս Երուսաղէմ աքսորել տուին։ Դոս ալ եթէ ազգասիրական ճառ մը խօսիմ ո՞ր պիտի աքսորուիմ. ի վերին Երուսաղէմ արդեօք։ Բայց եթէ հոն գացի ձեզ ալ հետս կը տանին, ասիկա աղէկ գիտեցե՛հ աւ՛ր...։

ՅՈՒՆԻՍ 2019-ԻՆ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՈՒՄՆ...

Շարունակուած 6-րդ էջէն

2019 թուականի յուլիսին Գիւմրիի «Շիրակ» օդակայա-
նին մէջ ուղեւորահոսքը կազմեց 14.949 մարդ: 2018 թուա-
կանին նոյն ամսուան 17.898 ուղեւորահոսքին համեմատ
նուազումը հանդիսացաւ 16,5 տոկոս:

Տարեկիզբէն Դայաստանի Դանրապետութեան երկու
օդակայաններու ուղեւորահոսքը կազմեց 1.692.494 մարդ, որ
11 տոկոսով աւելի է Նախորդ տարուան 6 ամիսներէն:

«Չուարթնոց» եւ «Շիրակ» օդակայաններուն մէջ 2019
թուականի յունուար-յուլիս ամիսներուն, Նախորդ տար-
ւան նոյն ամիսներուն հետ համեմատած, 7,7 տոկոսով
աւելցան թռիչքներն ու վայրէջքները:

ԴԱՍՕ ՍԱՅԵԱՆԻ ԳԻՂԸ...

Շարունակուած 6-րդ էջէն

«Լորի արտաքին լուսաւորութիւնը բնակավայրի կարե-
ւորագոյն խնդիրներն է: Գիւղին մէջ եղած են գայլերու
յարծակման դէպքեր՝ գիշերային ժամերուն: Խնդիրի լու-
ծումը կարելոր է թե՛ մարդոց անվտանգութեան, թե՛ կեն-
սոլորտային զարգացման տեսանկիւնէ: Դոս կը գտնուի
Դամօ Սահեանքի տուն-թանգարանը: Վստահ եմ, որ լու-
սաւորութիւնը պիտի նպաստէ Նաեւ զբօսաշրջութեան
զարգացման», շեշտեց Դաւիթ Առուստամեանը:

ԵԹԷ ԶՈՒՆԵՄ ՆԱԻԹ...

Շարունակուած 4-րդ էջէն

Նպատակադրուած տարածում է քարոզում պետական ու
հանրային կազմակերպութիւնների միջոցով՝ աշխուժօրէն
օգտագործելով հայկական սփիւռքի ներուժը: Այս պարա-
գային մշակոյթը մատուցում է անգնահատելի ծառայու-
թիւն՝ աշխարհի կողմից Դայաստանը ճանաչելու եւ ըստ ար-
ժանտոյս գնահատելու ուղղութեամբ: Բացարձակ ճշմարտու-
թիւն է, որ երկրի եւ ժողովրդի բարձր արուեստը պետական
եւ ազգային շահերի պաշտպանութեան լաւագոյն միջոցնե-
րից է:

2.- Մշակոյթի եւ արուեստի առեւտրականացում: Սա
մշակութային դիւանագիտութեան վաղեմի փորձուած տե-
սակներից է, եւ այն խելացի ու ճիշդ կազմակերպելու դէպ-
քում, աւելացնում է երկրի պիւտճէն: Այս տիպի գործունեու-
թեան շառաւիղը շատ լայն է. գիտութիւն, արուեստ, ճար-
տարապետութիւն, գրականութիւն, երաժշտութիւն, գեղար-
ւեստ, թատրոն, շարժանկար, մարմնամարզ, զբօսաշրջու-
թիւն եւ այլն: Դայաստանի մշակոյթն այս առումով կատարե-
ալ **Կոլոնիալ** է իր գանձերով՝ սկսած Բագրատունիների
Դայկական մշակոյթի նոր ոսկեդարից, Վերածննդի դա-
րաշրջանից՝ վերջացած մեր ժամանակներով:

Մնում է մէկտեղել հայութեան տաղանդաշատ ուժերը,
ստեղծել համակարգուած մշակութային դիւանագիտու-
թեան հաստատութիւն, որը կարող է դառնալ պետական-
ազգային շահերի անփոխարինելի կռուան եւ գործողու-
թեան ծրագիր:

ԺԱՄԱՆՅ

	ԽԱՉԲԱՌ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Զերականական ընդունելութիւն - Յուշիկ:
2. Մեռելի ոգի:
3. Ցուցական ածական - Արամ Դայկազի երկերէն - Դրկից տառեր:
4. Գոճան - Փականք:
5. Դայաստանի գետերէն - Պաղեստինեան քաղաք:
6. Տորրանոց:
7. Արամաղ (հակ.) - Կարթային մէջ կը գտնուի - Աղոթօք:
8. Ամէնօրեայ:
9. Մնալ, կենալ:
10. Արական օտար անուն - Իսլամական Դանրապետութիւն:
11. Կանացի օտար շարաթաթերթ - Բայակերտ մասնիկ - Նզովք:

ՈՒՐԱԴԱՅՅԵԱՑ

1. Սինձ, մածուած - Պահպանէ՛:
2. Նախահօր կողակիցը - Իրարու կցել:
3. Նոյն գիրերը - Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոսի ծննդավայրը:
4. Բոպիկ - Դայկական ամիսներու ԺԷ. օրը:
5. Արմէն Շիտանեանի երկերէն:
6. Շարունակ - Իգական օտար անուն:
7. Զորքուած սևամէջ դղում:
8. Զեռքի մաս - Յօժարակամ:
9. Էական բայ - Փուճ - Այբութենէն:
10. Գառնսիրուկ - Զայնակից տառեր - Տնկելի ճիւղ:
11. Գուշակ, տեսնող - Անձնական դերանուն:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ



Ի՞նչ կ'ըսեն ՍՍՏՂԵՐԸ

Խոյ (21 մարտէն 20 ապրիլ)
Վարչական գործերով պիտի զբաղիք այս շրջանին: Ձեր
Նիւթական վիճակին հոգ տարեք: Պետք է խնայողութիւն
կատարեք, որպէսզի Նիւթական դժուարութեան մէջ չմնաք:

Ցուլ (21 ապրիլէն 21 մայիս)
Ուրախ լուր մը եւ գնահատական մը պիտի ստանաք:
Ձեր ընկերներուն եւ հարազատներուն հետ հաճելի ժամա-
նակ պիտի անցընէք բնութեան գիրկը: Ամսուան բախտա-
ւոր օրերէն մէկն է:

Երկուորեակ (22 մայիսէն 21 յունիս)
Որեւէ նոր գործի մի՛ սկսիք: Յաջողութիւն պիտի չկարե-
նաք արձանագդէր այս շրջանին: Մի՛ յուսահատիք: Ժամա-
նակաւոր այս կացութիւնը կրնայ փոխուիլ: Դանդաղոր եւ
զօրաւոր եղէք:

Խեցեցետիկ (22 յունիսէն 23 յուլիս)
Յուսահատ վիճակ մը պիտի ունենաք այս շրջանին:
Ամսուան վատ օրերէն մէկն է, արկածախնդրութեան մի՛ դի-
մէք: Ձեր անկախութիւնները պիտի չիրականանան:

Առիւծ (24 յուլիսէն 23 օգոստոս)
Դանգիստ եւ ապահով պիտի զգաք ձեր ընկերներուն եւ
բարեկամներուն ներկայութեամբ: Տրամաբանութեամբ մօ-
տեցէք հարցերուն: Ձեր ընկերները օգտակար պիտի դառ-
նան ձեզի՝ ձեր մէկ հարցի լուծման մէջ:

Կոյս (24 օգոստոսէն 23 սեպտեմբեր)
Ձեր պարտականութիւնները լիովին կատարեցէք: Ձեր
բոլոր գաղտնիքները մի՛ պատմէք ձեր շուրջիներուն: Պետք
է վերապահ ըլլաք որոշ հարցերու պարագային:

Կշիռք (24 սեպտեմբերէն 23 հոկտեմբեր)
Խտացուցէք ձեր հանդիպումները եւ ժողովները, որպէս-
զի կարողանաք ձեր գործերը աւարտել ճիշդ ժամանակին:
Չիջումներ պէտք է կատարեք, որպէսզի դիւրանան ձեր գոր-
ծերը:

Կարիճ (24 հոկտեմբերէն 23 նոյեմբեր)
Մէկու մը հետ վիճաբանութեան մէջ պիտի մտնէք եւ
շատ պիտի նեղանաք: Դանգիստի ժամանակ տրամադրե-
ցէք, որպէսզի ձեր առողջութեան չվնասէք:

Աղեղնաւոր (24 նոյեմբերէն 21 դեկտեմբեր)
Պետք է հետեւիք ձեր թիշկին խորհուրդներուն, որպէս-
զի ձեր ապաքինումը արագ տեղի ունենայ: Նոր աշխա-
տանքի պիտի դիմէք եւ ընդունուիք: Դամբերող եղէք, ու ձեր
բոլոր դժուարութիւնները պիտի լուծուին:

Այծեղջիր (22 դեկտեմբերէն 20 յունուար)
Ձեր հարցերու լուծումին համար պիտի ուրախանաք:
Պիտի զբաղիք ընտանեկան հաւաքոյթով մը: Ձեր աշխա-
տանքին մէջ յաջողութիւն մը պիտի արձանագդէք եւ ուրա-
խանաք:

Ծովանուշ (21 յունուարէն 19 փետրուար)
Անձնական գետնի վրայ դժուար շրջան մը պիտի ունե-
նաք: Աշխատեցէք վիրաւորական խօսքերով չնեղացնել ձեր
շուրջիները: Ամսուան դժուար օրերէն մէկն է:

Ձուկ (20 փետրուարէն 20 մարտ)
Նիւթական հարց մը պիտի քննարկէք ձեր ընկերութեան
մէջ: Մեծ ճիգ պիտի թափէք՝ ձեր հարցերը լուծելու: Աշխա-
տանքային ճամբորդութիւն մը պիտի կատարեք:

	ՍՈՒՏՈՔՈՒ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

Դորիգոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ
սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է
խրաքանցիւր 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3):
Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր
քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ
հորիզոնական իւրաքանցիւր շարք, ուղղահայեաց
իւրաքանցիւր սիւնակ եւ 9 քառակուսիիւնց իւրաքանցիւր
բաժին ունենայ 1էն 9 թուանշանները՝ իւրաքանցիւր
թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով:
Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտօնուած է թուանշան
մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ:
Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ
քառակուսիներուն մէջ գետեղուած են:

ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒՆ ԼՈՒՑՈՒՄՆԵՐԸ

	ԽԱՉԲԱՌ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ն	Ա	Ր	Ո	Ն	Ի	Ս	Դ	Ա	Ս	Կ
2	Ա	Ր	Ք	Ո	Ր	Ի	Ս	Դ	Ա	Ս	Կ
3	Ք	Օ	Պ	Ք	Օ	Տ	Ի	Ր			
4	Ա	Ս	Ե	Ս	Ի	Ր	Կ	Ա	Ս	Կ	Ս
5	Լ	Ի	Ս	Ե	Ա	Ս	Կ	Ա	Ս	Կ	Ս
6	Ի	Ա	Ս	Դ	Ո	Ք	Ս	Ի	Ր		
7	Ա	Ս	Օ	Ր	Ի	Լ	Ի	Ր			
8	Ա	Ս	Ե	Ա	Ս	Կ	Ա	Ս	Կ	Ս	Կ
9	Ն	Ա	Ր	Ո	Ն	Ի	Ս	Կ	Ա	Ս	Կ
10	Ա	Ս	Ե	Ա	Ս	Կ	Ա	Ս	Կ	Ս	Կ
11	Գ	Ր	Ա	Ս	Դ	Ս	Կ	Ա	Ս	Կ	Ս

ՍՈՒՏՈՔՈՒ

	3	2	8	1	6	5	9	4	7
7	4	1	3	2	9	5	8	6	
6	9	5	4	8	7	2	3	1	
1	7	6	2	9	8	4	5	3	
5	8	4	6	3	1	7	9	2	
9	3	2	7	5	4	6	1	8	
4	1	3	9	7	6	8	2	5	
8	6	9	5	1	2	3	7	4	
2	5	7	8	4	3	1	6	9	

1969 - 2019

21 ՕԳՈՍՏՈՍ

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

ԱՐՏԱԳԱՐԹԻ ԶՈՐՍ ՈՒՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արտագաղթը ընթացիկ երեւոյթ է ժողովուրդներու կենսքին մէջ: Արտագաղթ տեղի կ'ունենայ գրեթէ բոլոր երկիրներէն: Այս շարժումէն զերծ չեն նոյնիսկ անոնք, որոնք պետական, ընկերային հաստատուն կառոյցներու նպաստը կը վայելեն: Այս վերջիններու պարագային, արտագաղթը մտահոգիչ երեւոյթ չէ, նոյնիսկ կը քաջա-լերուի ո՛չ միայն որոշ հաւասարակշռութիւն մը ստեղծելու համար տուեալ երկրին տնտեսական կարելիութիւններուն եւ աճի համեմատութեան միջեւ, այլ նաեւ՝ օտար երկիրներու մէջ հայրենիքի շրջուն եւ անպաշտօն դեսպաններ ունենալու անկախութեամբ:

Արտագաղթը կը դառնայ աղէտ այն ժողովուրդներուն համար, որոնք իրենց համրանքին վրայ գուրգուրալու հիմնական պատճառներ ունին:

Դայութիւնը, մայր հայրենիքի թէ սփիւռքի իր հատուածներով, կը գտնուի այդ ժողովուրդներու շարքին, նոյնիսկ՝ առաջին գիծի վրայ: Մեր պարագային, աղետը ամբողջական է, ու կորուստը, որուն համար շարունակ ահագանք հնչեցուցած ենք ու պիտի չդադրինք հնչեցնել, բացարձակապէս անդարմանելի:

Անկարկ մը մեր իրականութեան վրայ՝ ու պիտի տեսնենք, թէ արտագաղթի շարժումը կը կատարուի չորս ուղղութեամբ, երեք տարբեր մեկնակէտներէ.

Առաջին.- Արտագաղթ ազգային կազմակերպուած կենսք ունեցող հայահոծ գաղութներէ՝ դէպի հեռաւոր ափեր:

Երկրորդ.- Արտագաղթ համայնավար տիրապետութեան ենթակայ արեւելաեւ-րոպական երկիրներէն՝ դէպի Ամերիկա կամ այլուր:

Երրորդ.- Արտագաղթ մայր հայրենիքէն՝ դէպի խորհրդային լայնածաւալ կայս-րութեան զանազան անկիւնները:

Չորրորդ.- Մայր հայրենիքէն Նախկին ներգաղթողներու վերադարձ դէպի իրենց բնակավայրը՝ Ֆրանսա, Յունաստան կամ այլուր:

Արտագաղթի այս չորս տեսակի շարժումները, չորսն ալ վնասակար մեր ընդ-հանրական մտահոգութիւններուն տեսակէտէն, ունին տարբեր շարժառիթներ եւ դրոշապատճառներ: Բայց ինչ որ ալ ըլլան անոնք, ենթակաները որքան ալ փորձեն արդարաւանի պատճառներ փնտռել ու տալ իրենց քայլերուն, դատապարտելի են այն ԴԱՍԱԼՔՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՐ, ՈՐ ԿԸ ԳՈՐԾԵՆ ԴՅՅՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԸՄՅԵՐՈՒՆ ԴՅՅՈՒԹՅԱՆ:

Դատապարտելի է ան, որ Մերձաւոր Արեւելքի գաղութներէն, ուր իբրեւ հա-մայնք յիսուն տարուան մեր ջանքերը արդիւնաւորուեցան կազմակերպուած կենս-քի մը նպաստով եւ այն մթնոլորտով, որ անհրաժեշտ է մեր ցեղային առհաւական ժառանգութիւններուն զարգացման համար, յանկարծ, քաղաքական, տնտեսա-կան կամ ընկերային այս կամ այս պատճառով կը հեռանայ այս ափերէն՝ իբր թէ ապահով կայք գտնելու համար հեռաւոր եւ անհարազատ հորիզոններու տակ:

Դատապարտելի է (շատ աւելի՝ քան Մերձաւոր Արեւելքի երկիրներէն մեկնողը), որ կը լքէ հայրենի հողը, հոն իր փնտռածը (կամ խոստացուածը) գտած չլլալու պիտաագին հոգեբանութեամբ՝ վերադառնալու համար Ֆրանսա, Յունաստան կամ այլուր:

Վերի երկու պարագաներուն, դատապարտութեան մեր խօսքը կ'երթայ ան-հատներուն, որոնք անխոհեմ քայլ մը կ'առնեն թէ՛ իրենց խաշուոյն եւ թէ՛ մանա-ւանդ այն ժողովուրդին, որուն կը պատկանին, մանաւանդ՝ իրենց զաւակները:

Կայ սակայն արտագաղթի միւս շարժումը, այն, որ կը կատարուի Դայաստանէն դէպի խորհրդային զանազան հանրապետութիւնները: Մեր վերջին տեղեկութիւն-ներուն համաձայն, այս շարժումը մտահոգիչ համեմատութիւններու հասած է վեր-ջին տասնամեակի ընթացքին՝ զբաղեցնելով օրուան ղեկավարութիւնը, որ սակայն իր հնարաւորութեան սահմաններուն մէջ եւ իրաւասութեանց գծով, կ'ապրի տա-ռապաղեղ բացարձակ անզօրութեան մը:

Ամէն տարի հազարաւոր հայեր, մանաւանդ՝ երիտասարդներ, աւելի լայն աս-պարեզ գտնելու անկախութեամբ, կը լքեն հայրենի երկիրը, Դայաստանի ստեղծա-րար մթնոլորտը ու կը մեկնին Ռուսաստան կամ խորհրդային այլ հանրապետու-թիւններ՝ հոն անհետ կորսուելու համար ընդհանուր խառնարանին մէջ: Դայաս-տանի ղեկավարութիւնը կ'ապրի այս աղետին մտահոգութիւնը, մանաւանդ լաւա-տեղեկաւ է պատճառներուն, բայց կաշկանդումով մը, որուն վրայ ծանրանալու պէտք չունինք՝ իբրեւ հանրայայտ իրողութեան, կը դառնայ անզօր հանդիսատեսը ազգային ծանրակշիռ խնդիր մը, որ իսկական ողբերգութեան մը բնոյթը ունի:

Այն պատճառները, որոնք Դայաստանի մեր եղբայրները կը մղեն «խորհրդային հայրենիք»-ի անսահման տարածութիւններուն մէջ «բախտ փնտռելու», կ'աւելան այլ պատճառներու վրայ՝ Արեւելեան Եւրոպայի արբանեակ երկիրներէն հեռացնե-լու համար մեր հայրենակիցները, որոնք կենսքի եւ Նիւթի ապահովութիւն կը յու-սան գտնել իրենց համար բոլորովին օտար պայմաններու մէջ:

Արտագաղթի վերջին երկու պարագաներուն գծով, որքա՛ն պիտի շահեր հայու-թիւնը, պիտի շահեր անոր դատը, եթէ երբեք մեր հայրենիքին մէջ հնարաւորու-թիւններ ստեղծուէին ո՛չ միայն դէպի դուրս հոսանքը դադրեցնելու, այլ նաեւ արե-ւելաեւրոպական գաղութներու մեր հայրենակիցներուն հայրենի երրից շնորհելու համար:

Այդ հնարաւորութիւններէն մէկը մեր Դատին արդար լուծումն է, գտնե՛լ այդ Դա-տին այն մասին, որ կը վերաբերի ներքին հողերուն, որոնք վերադարձը կը կարօ-նի ներքին կարգադրութիւններու, միջազգային բարդութիւններ չի ստեղծեր, այլ միայն դժգոհութիւն՝ «եղբայրական» երկիրներու մէջ, որոնք յիսուն տարիէ ի

ԼՈՂԱՐՇԱՐ

ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ
ԿՐՏԵՐՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻ
ԱՌՅԵԱՆՈՒԹԵԱՆ



20-25 օգոստոսին Յունգարիոյ մայրաքաղաք Պուտափեշտի մէջ տեղի կ'ունենայ լողարշաւի կրտսերներու (երկսեռ) աշխարհի ախոյեանութիւնը, որուն իր մասնակցութիւնը կը բերէ Նաեւ Լիբանան՝ վեց երկսեռ մարզիկներով, որոնք պիտի մասնակցին տարբեր դասակարգերու մրցումներուն:

Լիբանանեան պատուիրակութիւնը կը գլխաւորէ Լիբանանի լողարշաւի ֆետերասիոնի անդամ Ապպուտ Իսսա, իսկ մարզիկներուն մարզիչն է Ժորժ Շազպէ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՆԸԺՄԷ ԵՒ ԹՐԻՓՈԼԻ
ՈՒՆԵՅԱՆ ԻՐԵՆՑ ՆՈՐ
ՍԱՐԶԻԶՆԵՐԸ



Սոհամետ Ապտել Ազիմ



Ամմետ Յաֆէզ

Լիբանանի ֆուլթպոլի ախոյեանութեան 2019-2020 տարեշրջանի Նախօրեակին Ա. դասակարգի երկու խումբեր՝ Նըժմէ եւ Թրիփոլի, պաշտօնական յայտարարութիւններ հրապարակելով յայտնեցին, որ ունեցան իրենց Նոր գլխաւոր մարզիչները:

Նըժմէի Նոր մարզիչ նշանակուեցաւ եգիպտացի Սոհամետ Ապտել Ազիմ:

Ան եղած է շարք մը ակումբներու մարզիչ եւ պաշտօնավարած Յորդանանի, Պահրէյնի, Զուէյթի եւ Օմանի մէջ:

Ինչ կը վերաբերի հիսպային Լիբանանի Թրիփոլի ֆուլթպոլի խումբին, անոր մարզիչը եւս եղաւ եգիպտոսէն՝ Ամմետ Յաֆէզ:

Ակումբին պատասխանատուները զայն պաշտօնապէս ներկայացուցին հանրութեան:

ՏԻՏԻԷ ՏՐՈԿՊԱ՝ ՓՐՈՍԿՐԵԱՅ
ԱՓՈՒՆԶԻ ՖՈՒԹՊՈԼԻ
ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՆԱԽԱԳԱՐՅ



Չելսիի եւ Փոլսկրեայ Ափուլնի ֆուլթպոլի ազգային խումբի Նախկին յառաջապահ Տիտի Տրոկպա շատ հաւանաբար ըլլայ իր երկրի ֆուլթպոլի ֆետերասիոնի յաջորդ Նախագահը:

41 տարեկան Տրոկպա պատրաստած է դէկտեմբերին տեղի ունենալից ընտրութիւններուն մասնակցելու անհրաժեշտ փաստաթուղթերը, կը յայտնէ «Լ'Էքիփ»:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎ

ԿԻՐԱԿԻ, 25 ՕԳՈՍՏՈՍԻՆ՝
ՇԱՊԱՊ ՍԱՅԵԼ - ԱՆՍԱՐ ԱԲԱՐՏԱԿԱՆ

Շաբաթակիցի Լիբանանի ֆուլթպոլի ֆետերասիոնի մամլոյ քարտուղարութիւնը հրապարակեց կատարուած մրցումներուն վաւերացուած արդիւնքներն ու շաբաթավերջին կատարուելիք մրցումներուն յայտագիրը:

Լիբանանի ֆուլթպոլի ֆետերասիոնի բաժակի մրցաշարքի աւարտական ճակատումին, կիրակի, 25 օգոստոսին, իրարու դէմ պիտի մրցին Անսար եւ Շապապ Սահել:

Այս մրցումը, որ պիտի սկսի ժամը 21:30-ին, տեղի պիտի ունենայ Զամիլ Շամունի անուան Մարզական ասանին մէջ:

Կիսաւարտական մրցումներուն Անսար 5-0 արդիւնքով յաղթեց Շապապ Ղազիէին, իսկ Շապապ Սահել՝ Ախա Աիլի Ալէին (2-0):

Ֆետերասիոնին կողմէ կազմակերպուած այլ մրցաշարքին աւարտական խումբերը յստակացան:

Շաբաթ, 24 օգոստոսին, երեկոյեան ժամը 17:00-ին, «Ֆուտա Շեհապ» մարզադաշտին վրայ (Ճիւնի) իրարու դէմ կը մրցին Սալամ Չղարթա եւ Պըրժ:

Կիսաւարտականին Սալամ Չղարթա 1-0 արդիւնքով յաղթեց Սաֆային, մինչ

Պըրժ՝ Թրիփոլին (3-0):

Ֆետերասիոնը վաւերացուց Նաեւ երիտասարդներու ֆուլթպոլի ախոյեանութեան 2019-2020 տարեշրջանի Գ. հանգըրլանի մրցումներուն արդիւնքները: Մեծագոյն յաղթականը հանդիսացաւ Աիտ, որ 8-1 արդիւնքով պարտութեան մատնեց Շապապ Մաժտալպաանան:

Դ. հանգըրլանի մրցումները (թիւով 10) տեղի կ'ունենան կիրակի, 25 օգոստոսին:

Ֆետերասիոնը շնորհաւորեց Շապապ Շընահը, որ հանդիսացաւ պիչ ֆուլթպոլի 2018-2019 տարեշրջանի Լիբանանի ախոյեան՝ աւարտականին 6-4 արդիւնքով յաղթելէ ետք Պէյրութ խումբին:

Ինչ կը վերաբերի սահմանուած պատիժներուն (երիտասարդներու ախոյեանութիւն), Սոհամետ Նապրետտին (Ռասիկ), մէկ տարիով կախակայուեցաւ եւ մէկ միլիոն լիբանանեան ոսկի տուգանքի ենթարկուեցաւ:

Պիչ ֆուլթպոլին գծով «Ռեժի» խումբը հինգ հարիւր հազար լիբանանեան ոսկի տուգանքի ենթարկուեցաւ, իսկ անոր մէկ մարզիկը՝ Սոհամետ Սալէի, երեք մրցումով կախակայուեցաւ:

ԿԻՐԱԿԻ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

ԶԱԼԵԼՈՒ ՄՐՅՈՒՄ՝ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ
ԲԱՆԱԿԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Յովանաւորութեամբ Լիբանանեան բանակի հրամանատար գոր. Ժոզէֆ Աուլի, բանակի Արագ միջամտութեան վաշտը կը կազմակերպէ «Կը քալենք յիշելու համար» խորագիրով մրցումը՝ ահաբեկչութեան դէմ բանակին մղած «Բարձուքներու արշալոյսը» ճակատամարտին արձանագրուած յաղթանակի տարեդարձին առիթով:

Անկա տեղի պիտի ունենայ Արգէն Միգիարա:

Տեղի պիտի ունենան չորս դասակարգի մրցումներ.

Տղաք՝ բանակային, աղջիկներ՝ բանակային, տղաք՝ քաղաքային եւ աղջիկներ՝ քաղաքային:

Մրցումին բոլոր մասնակցողները պիտի քալեն Արագ միջամտութեան վաշտին ընկերակցութեամբ, կիրակի, 1 սեպտեմբերին, առաւօտեան ժամը 6:00-ին:



Մրցումը գլխաւոր նպատակ ունի միաւորել բանակը եւ քաղաքացիները, որպէսզի անոնց միջեւ հայրենիքին նկատմամբ կապը մնայ անքակտելի:

Աւարտին բոլոր մասնակցողները պիտի ընթերն բանակայիններուն հետ՝ խարոյկի շուրջ:

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին մասնակցութիւնը բերել քալելու այս մրցումին, պէտք է կապ հաստատեն հետեւեալ երկու թիւերն մէկուն. 06-602218 եւ 06-213153:

ՊԱՍԵՐԹՊՈԼ

ՀԱՐՏԵՆ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ ՊԱՏՐԱՍԱԾ Է
2019-2020 ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

«ԷՆ. Պի. Եյ.»-ի պասքէթպոլի ախոյեանութեան իր մասնակցութիւնը բերող Յիւնսթըն Ռոքեթի մարզիկ Ճէյմս Յարտեն յայտարարեց, թէ 2019-2020 տարեշրջանին պիտի զարմացնէ բոլորը՝ իր Նոր հնարքներով:

Ան ըսաւ, թէ Նախապատրաստական փորձերու ընթացքին կ'աշխատի տարբեր տեսակի անակնկալներ պատրաստել:

Ան յայտնեց, որ այժմ այդ ուղղութեամբ յաւելեալ ոչինչ պիտի յայտարարէ, բայց անակնկալները պիտի յայտնուին Նոր տարեշրջանին:

Ինչ կը վերաբերի Ռասըլ Ուեսթպորուքի Ռոքեթից տեղափոխուելուն, ան նշեց, որ որեւէ դժուարութիւն պիտի չըլլայ իր եւ անոր միջեւ միասին խաղալու առումով՝ նկատի ունենալով, որ ինք եւ Ուեսթպորուք Նախապէս իրարու հետ միասին մրցումներ կատարած են ախոյեանութեան ծիրին մէջ եւ ազգային խումբին հետ:



ՌԻՊԵՐԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԿԸ ԿԱՏԱՐԷ ՖԻՈՐԵՆԹԻՆԱՅԻ ՅԵՏ

Պայերն Միւնխիխի Նախկին միջնապահ Ֆրանք Ռիպերի լուրջ բանակցութիւններ կը կատարէ իտալական Ֆիորենթինա ֆուլթպոլի ակումբին հետ, կը յայտնէ «Սքայ Սփորթս»:



Նախքան այս լուրին հրապարակիւք, կը խօսուէր, որ Լոքոմոթիւ Մոսկուա կ'ուզէ իր կազմին միացնել 36 տարեկան Ֆրանսացին:

ԵՈՒՎԵՆԹՈՒՄԻ ՍԱՐԶԻԶԸ
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԻ

Իտալիոյ ֆուլթպոլի ախոյեանութեան Եուվենթուսի պաշտօնական կայքը յայտնեց, որ ակումբի գլխաւոր մարզիչ Մաուրիցիո Սարիի մօտ առողջական խնդիրներ չկայտնեցան:

Ան խումբին կատարած վերջին քանի մը օրուան փորձերուն չմասնակցեցաւ:

Բժշկական քննութիւնները ցոյց տուին, որ 60 տարեկան մարզիչին թոքերը բոլորեալ են, եւ ան հոգատարութեան կարիք ունի՝ լաւապէս ապացնելու համար:

Չելսիի Նախկին մարզիչը՝ իտալացի Սարի, Եուվենթուսի մարզիչի իր պաշտօնը ստանձնած էր Նախորդ յունիսին:

ՃԱՏՐԱԿ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝
ԵՐԿՐՈՐԴ.
ԼԻԼԻԹ ՄԿՐՏԶԵԱՆ՝ ԵՐՐՈՐԴ



Սպանիոյ մէջ իր աւարտին հասաւ «Փոնթեւտրա օփըն» ճատրակի միջազգային մրցաշարքը, որուն իրենց մասնակցութիւնը բերին 85 ճատրակ խաղացողներ, որոնց կարգին՝ 9 կրանտմասթըրներ:

Հայաստանի ներկայացուցիչ Կարեն Գրիգորեան առաւելագոյն 9 կէտէն 7 կէտ ապահովելով գրաւեց 2-րդ դիրքը:

Իսկ Գերմանիոյ մէջ աւարտած «Տրեստըն օփըն»-ի միջազգային մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին 64 ճատրակ խաղացողներ:

Հայաստանի աղջկանց հաւաքականի անդամ Լիլիթ Մկրտչեան առաւելագոյն 9 կէտէն 7 կէտ ապահովելով հանդիսացաւ 3-րդ:

ՈԱՖԱՅԵԼ ՆԱԶԱՐԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ 19 ՏԱՐԵԿԱՆԵՆ ՎԱՐ
ՖՈՒԹՊՈԼԻ ՀԱՐԱԶԱԿԱՆԻ ՍԱՐԶԻԶ



Հայաստանի ֆուլթպոլի ֆետերասիոնին պաշտօնական կայքը կը տեղեկացնէ, որ Հայաստանի 19 տարեկանէն վար ֆուլթպոլի հաւաքականի գլխաւոր մարզիչ նշանակուեցաւ Ռաֆայէլ Նազարեան:

Ան անցեալին եղած է Հայաստանի 21 տարեկանէն վար հաւաքականի մարզիչ եւ արձանագրած բաւական լաւ արդիւնքներ:

Ան Հայաստանի ֆուլթպոլի ազգային հաւաքականին շապիկը կրած է 23 մրցումի ընթացքին (1997-ԷՆ 2007) եւ անոր հետ նշանակած կ'ու մը:

Նշենք, որ անոր գլխաւորած կազմը այսօր՝ չորեքշաբթի, 21 օգոստոսին կը հիւրընկալէ Լիբանանի կազմը: Երկու օր ետք, ուրբաթ, 23 օգոստոսին, երկու կազմերը դարձեալ իրարու կը հանդիպին Երեւանի մէջ:

ԵՒՐՕ-2020

ՀԱՅԱՍՏԱՆ - ՊՈՍՆԻԱ
ՄՐՅՈՒՄԸ՝ 8 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ



Եւրո-2020-ի ֆուլթպոլի ախոյեանութեան զտումի մրցաշարքին ծիրին մէջ, 8 սեպտեմբերին տեղի կ'ունենայ Հայաստան - Պոսնիա մրցումը՝ Ժ. խմբակին մէջ:

Այս մրցումը, որ տեղի պիտի ունենայ Վազգէն Սարգսեանի անուան հանրապետական մարզադաշտին վրայ, պիտի սկսի ժամը 16:00-ին՝ Պէյրութի ժամանակացոյցով:

Հայաստանի խմբակին մաս կը կազմեն Նաեւ Ֆիլանտա, Իտալիա, Յունաստան եւ Լիխթենշայն:

Հայրենի կազմը, որ ցարդ կատարած է չորս մրցում, իր տրամադրութեան տակ ունի 6 կէտ եւ կը գրաւէ երրորդ դիրքը:

Առաջին դիրքին վրայ է Իտալիա, որ ապահոված է առաւելագոյն 12 կէտը:

Ստորել՝ Ժ. խմբակին դասաւորման պատկերը.	ՄՐՏ.	ԿԵՏ
1.- Իտալիա	4	12
2.- Ֆիլանտա	4	9
3.- ՀԱՅԱՍՏԱՆ	4	6
4.- Յունաստան	4	4
5.- Պոսնիա	4	4
6.- Լիխթենշայն	4	0

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՅՔԷՉԸ
www.bourjhammoud.gov.lb

ԹՐԱՄՓ ՃՈՆՍԸՆԻ ՀԵՏ ԸՆՆԱՐԿԱԾ Է «ՊՐԵԶԻԹ»-Ի ՀՈԼՈՎՈՅԹԸ



Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփ Բրիտանիոյ վարչապետ Պորիս Ճոնսընի հետ ըննարկած է Բրիտանիոյ՝ Եւրոպական Միութենէն դուրս գալը: Այս մասին կը հաղորդէ «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը՝ յօլում կատարելով Սպիտակ տան:

«Վարչապետ Ճոնսըն Նախագահին տեղեկացուցած է «Պրեզիթ»-ի վերաբերեալ», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Թրամփ նաեւ «մեծ ոգէտրութիւն» յայտնած է Ֆրանսայի մէջ տեղի ունենալիք Եօթներու խմբակի վեժաժողովի ծիրին մէջ Ճոնսընի հետ յառաջիկայ հանդիպման վերաբերեալ: Կը նշուի նաեւ, որ խօսակցութեան ընթացքին ըննարկուած են առեւտուրի եւ տնտեսութեան վերաբերող հարցեր:

«Մենք խօսեցանք «Պրեզիթ»-ի, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու եւ Բրիտանիոյ միջեւ ազատ առեւտուրի գործարքին մասին», «Թոլիթըր»-ի վրայ գրած է Թրամփ:

Սպիտակ տան ղեկավարը Նախապէս աջակցութիւն յայտնած էր Բրիտանիոյ՝ Եւրոպական Միութենէն դուրս գալուն, ինչպէս նաեւ դրական արտայայտուած Ճոնսընի մասին:

ԷՐՏՈՂԱՆ ԱԶՐՊԵՅՃԱՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՐԵԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴԻ ՆԻՍՏԻՆ



Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Թայյիփ Էրտողան 3 իռլտեմբերին պիտի այցելէ Ազրպէյճան: Այս մասին կը հաղորդէ ազրպէյճանական «Թրենտ» լրատու գործակալութիւնը:

Թուրքիոյ Նախագահը Ազրպէյճան պիտի այցելէ թրքախօս պետութիւնները միաւորող միջազգային կազմակերպութեան՝ Թրքական խորհուրդի 7-րդ նիստին եւ Թրքական խորհուրդի ստեղծման 10-ամեակին նուիրուած ձեռնարկներուն մասնակցելու համար:

Թրքական խորհուրդը ստեղծուած է 3 իռլտեմբեր 2009-ին: Կազմակերպութեան անդամ պետութիւններն են Ազրպէյճանը, Թուրքիան, Ղազախստանը, Ուզպէքիստանը եւ Խըրվըզիստանը:

ՃԱՏԻ ԺՐԱՅՍԱԹԻ. «3 ՅՈՒՆԻՍԻՆ...»

Շարունակուած 2-րդ Էջէն

ընթացքին անոր վատ տնօրինումին պատճառով:

«Պէտք է դիմել գործնական քայլերու եւ կառավարութեան ներկայացնել ծրագիր մը ու ստանալ անոր վաւերացումը, որպէսզի անոր յաջորդէ աղբի տեսակաւորումը բնակարանին մէջ կատարելու եւ առողջապահութեան չափանիշները ամբողջացնող թափօններու թաղման վայրերու կառուցումը:

Իր կարգին, կենսոլորտի հարցերով խորհրդարանական մնայուն յանձնախումբի Նախագահ, երեսփոխան Մարուան Համատէ հաստատեց, որ կառավարութենէն պահանջուած է գումարել արտակարգ նիստ մը՝ քննարկելու համար կենսոլորտի յատուկ տագնապներն ու թղթածարները:

«ԿԸ ՓԱՓԱՔԻՆՔ ԿԵՐՏԵԼ...»

Շարունակուած 2-րդ Էջէն

այդ իմաստով լիբանանցիները պէտք է վկայեն կառավարութեան աշխատանքը, որուն համար կ'ընդունվ կազմակերպելու տնտեսական բնոյթի կլոր սեղան մը՝ մշակելու համար 2020-ի պետական ամավարկը», ըսաւ ան:

Ան աւելցուց, որ ինք պիտի շարունակէ Լեռնալիբանան այցելութիւնը, որ Զապըր Շմունի միջադէպին օրը ընդհատուած էր:

Պասիլ Նշէք, որ նիստին ընթացքին ըննարկուած են նաեւ Լիբանանի սահմանադրութեան թիւ 95-րդ յօդուածին վերաբերող մանրամասնութիւններ: «Կը փափաքիմք կերտել քաղաքացիական պետութիւն մը, սակայն մինչ այդ պիտի չգիշիմք հաւասար ներկայացուցչութեան իրաւունքն», շեշտեց Պասիլ:

ԸՍՏ «ՇԱՐՔ ԱՈՒՄԱԹ»-Ի

ԲԻՐՏ ԶԻՆԵԱԼՆԵՐԸ ԴՈՒՐՍ ՊԻՏԻ ԲԵՐՈՒՄՆ ՍՈՒՐԻՈՅ ՀԻՄՆՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԳՕՏԻՆ, ՈՐ ՄԻԱՅՆ 70-80 ԲԻԼՈՄԵԹՐ ԵՐԿԱՅՆԵՐՈՎ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ



Դիւանագիտական արեւմտեան աղբիւրներ «Շարք Աուսաթ» օրաթերթին յայտնեցին, որ Սուրիոյ մէջ Եփրատի արեւելեան ափին վրայ «անվտանգութեան գօտի»-ի շուրջ գոյացած թուրք-ամերիկեան փոխադարձ հասկացողութեան հիմամբ այդ շրջանը պիտի ըլլայ Ռասուլ Այն եւ Թէլ Ապիատ քաղաքներուն միջեւ 70-80 քիլոմետր երկարութեամբ եւ 5-14 քիլոմետր խորութեամբ, այդտեղ թրքական եւ ամերիկեան ուժերը միասնաբար պարեկային ծառայութիւն պիտի կատարեն, ինչպէս նաեւ գործողութիւններու միացեալ կեդրոն պիտի հաստատուի:

Յիշեցնենք, որ թրքական կողմը կը պահանջէր, որ անվտանգութեան գօտին ժառանգուէր Իրաքի հետ սահման երկարի եւ անոր խորութիւնը ըլլայ 20-30 քիլոմետր: Աղբիւրները շեշտեցին, որ համաձայնութիւնները չեն ներառեր տեղական ինքնակառավարման որեւէ ոլորտ, կապ չու-

նին ՏԱՀԵԸ-ի դէմ պայքարի Միջազգային դաշինքին հետ, սակայն կը ներառեն քրտական ժողովուրդի պաշտպանութեան ջոկատներու շրջանէն դուրս բերում, ծանր զէնքերու թուրքիոյ սահմանէն 20 քիլոմետրով հեռացում եւ շրջանին վերել տնտեսական օդանւերու թռիչքներու արտօնում:

«Շարք Աուսաթ» կը նշէ, թէ թուրք-ամերիկեան համաձայնութենէն քանի մը օր ետք, Անգարա դէպի Իսլիպի գիւղական շրջանին մէջ գտնուող իր դիրքերը ուղարկած է զինուորական յաւելեալ ուժեր՝ «փորձելու» համար Սուրիոյ հիւսիս-արեւմուտքին մէջ լարուածութեան մեղմացման գօտիի շուրջ համաձայնութեան Մոսկուայի յանձնառութիւնը, սակայն անոնք Խան Շեյխուն քաղաքէն 15 քիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող Մաարաթ Նոհման քաղաք հասնելէ ետք ռուս-սուրիական ռմբակոծումի ենթարկուած են:

ԼՈՒՏՈՆ ՊԱՏՐԱՍ Ե ՊՐԻԹՍԵԼԻ ՀԵՏ ԸՆՆԱՐԿԵԼՈՒ «ՊՐԵԶԻԹ»-Ի ՇՈՒՐՋ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԵԻ ՇՐՋԱԳԻԾԸ

Բրիտանիոյ կառավարութիւնը պատրաստ է Եւրոպական Միութեան հետ բանակցութիւններ վարելու «Պրեզիթ»-ի պայմաններուն վերաբերեալ Նոր համաձայնագիրի կնքման համար: Այս մասին կը հաղորդէ «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը՝ յօլում կատարելով բրիտանական Նախարարաց խորհուրդէն աղբիւրի մը:

«Մենք կ'ուզենք գործարք կնքել: Յաւալի է, որ անոնք չեն ուզեր բանակցութիւններ վարել մեզի հետ: Այն փաստը, որ Եւրոպական Միութեան կազմէն դուրս գալու համաձայնագիրը Համայնքներու պալատին կողմէ մերժուած է ձայներու մեծ գերակշռութեամբ, կը նշանակէ, որ Եթէ Նոյնիսկ Նոր գործարք չկնքուի, ապա անոնք պէտք է պատրաստ ըլլան Նախորդին վերանայման: Մենք պատրաստ ենք եւ կ'ուզենք ատիկա ընել», ըսած է աղբիւրը:

Եւրոպական Միութեան ղեկավարութեան համաձայն, Բրիտանիոյ՝ Եւրոպական Միութենէն դուրս գալու առաւել հաւանական բեմադրութիւնը այս պահուս «կոշտ Պրեզիթ»-ն է՝ առանց ամէն կարգի համաձայնութիւններու: ԹԱՄՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին կը գրեն բրիտանական «Տէլի Թելեկրաֆ» եւ «Տը Կարտիք» օրաթերթերը, որոնք ծանօթացած են Եւրոպա-

կան յանձնաժողովի պաշտօնատարներու եւ Եւրոպական Միութեան անդամ 27 երկիրներու «Պրեզիթ»-ի պատասխանատու դիւանագետներու միջեւ հանդիպումի մանրամասնութիւններուն:

Օրաթերթերը կը նշեն, որ բառացիօրէն մինչեւ անցեալ շաբաթ Պրիւքսելի մէջ կ'իշխէր այն կարծիքը, թէ իռլտեմբերին «Պրեզիթ»-ին նուիրուած հերթական վեժաժողովի ընթացքին Բրիտանիան հերթական յետաձգման մասին խնդրանք պիտի ներկայացնէ: Սակայն անցեալ շաբաթ Բրիտանիոյ վարչապետ Պորիս Ճոնսընի յատուկ խորհրդական Տեյվիտ Ֆրոսթի հետ կայացած հանդիպումէն ետք, Եւրոպական Միութեան ներկայացուցիչներուն համար ակնյայտ դարձած է, որ Բրիտանիան ո'չ մէկ «Բ» ծրագիր, զիջումներ ո'չ մէկ պատրաստակամութիւն ունի, այլ կայ միայն «Ա» ծրագիրը՝ «անպայմանագիր Պրեզիթ»-ը:

Պրիւքսել զարմացած է, որ մինչեւ օրս երկրի Նոր վարչապետը ո'չ Եւրոպական Միութեան ղեկավարներէն մէկուն, ո'չ ալ Եւրոպական Միութեան անդամ երկիրներու ղեկավարութեան հետ հանդիպած է, ինչ որ, անոնց կարծիքով, անոր՝ փոխգիշտմանը պատրաստ ըլլալու նշան է:

ԱՅՍՕՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 ԵՆ 95 MHz

7.00	Քայլերգներ/Քարի լոյս	4.30	Օ.Թ.Վ.ի հայերէն լուրերու ուղղակի սփռում
7.15	Սփիւռքեան մեղմ երգեր	4.50	Խանդավառ երգեր
7.30	Երկու բարեւ	5.00	«Վանայ Զայն»-ը երեկոյեան
8.30	Լուրեր	5.30	ԳՈՂՅԱՐ համայնի կատարումներ
9.00	Երկու բարեւ	6.30	Լուրեր
10.00	Խանդավառ երգեր	6.50	Նոր երգեր
10.30	Հայկական աշխարհի լուրեր	7.30	Ծիրանի (Նիւթ՝ ազգային մշակութային պարբերականի մը անհրաժեշտութիւնը)
10.45	Երգային քաղաքականութիւն	8.00	Օրուան երգիչ (Վարդան Պատալեան)
11.00	Նոր երգեր	8.30	Ժողովրդային երգեր
11.30	Սփիւռքեան երգեր	9.00	Քնարային
12.00	Ո՛րք են, ի՞նչ կ'ընեն մեր երգիչները	9.30	Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)
12.30	Հայրենի սփրուած երգեր	9.45	Յեղիկակային երգեր
1.00	Ազգային-հայրենասիրական երգեր	11.00	Golden Oldies
1.30	Լուրեր	12.00	Յեղափոխական երգեր
1.45	Յեղափոխական երգեր	1.00	Հայերէն այլազան երգեր
2.30	Հայկական ռազմարուեստ	6.00	Հայկական երաժշտութիւն
3.00	Քըլ եմ պիյնում (Նիւթ՝ ռազմավարական, հիւր՝ Թաուֆիք Շուման)		
4.00	Խանդավառ երգեր		

«Վանայ Զայն»-էն սփռուող բոլոր յայտագիրները կարելի է գտնել եւ ունկնդրել ռատիոկայանի կայքէջին արխիւներ բաժնին մէջ (voiceofvan.net):

«ԿՈՇՏ «ՊՐԵԶԻԹ»-Ը ԿՐՆԱՅ ԼՈՒՐՋ ԽՆԴԻՐՆԵՐ ՍՏԵՂԾԵԼ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ» Կ'ԸՍԷ ԵՐՐՈՊԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ



Եթէ Բրիտանիան չվաւերացնէ Եւրոպական Միութենէն անջատուելու պայմաններուն վերաբերեալ համաձայնագիրը, որ բրիտանացի խորհրդարանականները արդէն քանի մը անգամ մերժած են, իսկ Եւրոպական Միութիւնը կը մերժէ զայն վերատեսութեան ենթարկել, ապա ատիկա մեծ դժուարութիւններ պիտի յառաջացնէ քաղաքացիներուն եւ առեւտուրին համար: ԹԱՄՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտարարած է Եւրոպական յանձնաժողովի բանքեր Նարաշա Պերթոն:

Ան յիշեցուցած է, որ այսպէս կոչուած «առանց գործարքի «Պրեզիթ»-ի պարագային Եւրոպական Միութեան օրէնսդրութիւնը երկրի միութենէն դուրս գալու օրը պիտի դադրի կիրարկուիլ Բրիտանիոյ նկատմամբ, պիտի չըլլայ երկրին վրայ Եւրոպական օրէնսդրութեան տարածման անցումային շրջանը՝ մեղմացնելու այն կացութիւնը, որ Նախատեսուած է «ապահարգանի» մասին համաձայնագիրով:

«Եւ ատիկա, ի հարկէ, զգալի խափանումներու պիտի բերէ թէ՛ քաղաքացիներուն, թէ՛ առեւտուրին համար, եւ ատիկա պիտի ունենայ տնտեսական լուրջ բացասական ազդեցութիւն, որ շատ ակէի ուժեղ պիտի ըլլայ Բրիտանիոյ մէջ, քան Եւրոպական Միութեան մէջ», ըսած է Պերթոն:

Բրիտանիոյ ընդդիմադիր Աշխատաւորական կուսակցութիւնը կ'առաջարկէ մօտ օրէն վերսկսիլ խորհրդարանի աշխատանքին, որպէսզի չարտօնուի երկրին Եւրոպական Միութենէն դուրս գալու առանց «Պրեզիթ»-ի պայմաններուն վերաբերեալ համաձայնագիրի: Այս մասին «Պի.Պի.Սի.»-ի եթերէն յայտարարած է աշխատաւորականներու ստուերային կառավարութեան ելեւմուտքի Նախարար Ճոն Մաքտոնըլ:

«Այժմ երեսփոխաններուն անհրաժեշտ է հաւաքուիլ, որովհետեւ մենք ժամանակի պէտք ունինք այդ հարցին շուրջ համապատասխան բանավէճ կատարելու համար», ըսած է ան՝ Նշելով. «Կառավարութեան անվտանգութիւն յայտնելը մեքանիզմներէն մէկն է» կոշտ «Պրեզիթ»-ը կանխարգիլելու համար:

«Այժմ ամէնէն զլխաւորը համաձայնագիրի բացակայութեամբ բեմադրութիւնը արգելակելն է: Եւ կը կարծեմ, որ խորհրդարանին մէջ տակաւին կայ մեծամասնութիւն» (վարչապետ) Պորիս Ճոնսընին ըսելու, որ մենք պիտի չընդունինք առանց գործարքի «Պրեզիթ»-ը», աւելցուցած է ան:

ԱՏՀԻԼ AFHIL
ԱՄԱՌՆԱՅԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ
14-էն 16 տարեկա՞ն են
Կ'ուզե՞ն մասնագէտ մարզիչի հսկողութեամբ մարզուիլ այս ամառ

Միացիր ԱՏՀԻԼ-ի «Արին» եւ «Աղբալեան» կեդրոններուն
Առաւօտեան ժամը 8:00-էն կէսօրէ ետք ժամը 2:00

Ամսական յառուկ սակ՝ 50.000 L.A.

ԱՏՀԻԼ «Արին» կեդրոն
Պուրկ Համուտ 01-255023

ԱՏՀԻԼ «Աղբալեան» կեդրոն
Մզդիք 04/712342

www.afhil.com

«ԱԶԴԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՑԻԵ ԵՐԵՎԱՆԻՆԻ ժԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՅՐԴՆԵՐԸ բացառութիւն են: Մահադդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան առեւ որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԱԶԴԱԿ

ՀՏՈ: (01) 258526 - 260115 - 241274
ՊՈՒՐԴ ՀԱՄՈՒՏ

AZTAG

TEL.: (01) 258526 - 260115 - 241274 - E-mail: info@aztagdaily.com
FAX: (01) 258529 - P.O.BOX: 80860 BOURJ HAMMOUD

ارتكك: فاكس: ٢٥٨٥٢٩ (٠١) - ص.ب: ٨٠٨٦٠ بروج حمود

(٠١) ٢٤١٢٧٤ - ٢٦.١١٥ - ٢٥٨٥٢٦: هكاتف